



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



United Nations
Convention to Combat
Desertification



«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Անապատացման դեմ պայքարի մասին երաշտի և/կամ անապատացման
ենթարկված երկրներում, մասնավորապես, Աֆրիկայում

8-րդ ազգային զեկույց



ԵՐԵՎԱՆ 2023

Միավորված ազգերի կազմակերպության «Անապատացման դեմ պայքարի...» կոնվենցիայի իրականացման 8-րդ Ազգային զեկույցը մշակվել է Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից՝ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի և Միավորված ազգերի կազմակերպության Շրջակա միջավայրի ծրագրի կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում:

8-րդ Ազգային զեկույցը մշակվել է «ԿՏԲԿ Հայաստան» Հիմնադրամի փորձագետների կողմից՝ ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» կոնվենցիայի ազգային համակարգողի հետ համատեղ: Ազգային զեկույցը տեղադրվել է <https://prais.unccd.int/unccd/reports> կայքէջում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

2. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 8-Ը ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ 6

2.1. Օրդոսում ընդունված «Կոնվենցիայի 2018-2030 թթ. շրջանակային ռազմավարություն» 7/COP.13 որոշում..... 7

3. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ 22

3.1. Աշխատանքների իրականացման մեթոդաբանություն 30

3.2. Շահակիր խմբերի մասնակցության մեթոդները..... 32

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 34

5. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՏԱՄՆԱՄՅԱ (2018-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ) ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՅԻ

5.1. Ռազմավարական նպատակ 1 (SO1)..... 35

5.1.1. SO1-1 ցամաքային տարածքի ծածկույթի վիճակը բնութագրող միտումները 36

5.1.2. SO1-2 Հողի արտադրողականությունը կամ հողի ֆունկցիոնալությունը բնութագրող միտումներ 45

5.1.3. SO1-3 հողի ստորգետնյա և վերգետնյա հատվածներում օրգանական ածխածնի քանակի փոփոխման միտումներ 50

5.1.4. SO 1-4 Դեգրադացված հողերի մասնաբաժինն ընդհանուր տարածքի նկատմամբ (Կայուն զարգացման նպատակներ, ցուցանիշ 15.3.1) 58

5.2. Ռազմավարական նպատակ 2 62

5.2.1. SO2-1 Հարաբերական աղբատության գծից ցածր և/կամ տուժած տարածքներում եկամուտների անհավասարության պայմաններում ապրող բնակչության փոփոխության միտումները 62

<u>5.2.2. SO2-2 Տուժած տարածքներում անվտանգ խմելու ջրի հասանելիության միտումները</u>	66
<u>5.2.3. SO2-3. Հողի դեգրադացիայի արդյունքում տուժած բնակչության մասնաբաժնի փոփոխության միտումները՝ տարբերակված ըստ սեռի</u>	68
<u>5.3. Ռազմավարական նպատակ 3</u>	69
<u>5.3.1. SO3-1. Երաշտի ենթարկված հողերի մասնաբաժնի փոփոխության միտումները հողերի ընդհանուր ծածկույթի նկատմամբ</u>	70
<u>5.3.2. SO3-2 Երաշտի արդյունքում տուժած ամբողջ բնակչության մասնաբաժնի փոփոխության միտումները</u>	75
<u>5.3.3. SO3-3 Երաշտի խոցելիության աստիճանի միտումները</u>	78
<u>5.4. Ռազմավարական նպատակ 4</u>	80
<u>5.4.1. SO4-1. Հողի ստորգետնյա և վերգետնյա հատվածներում օրգանական ածխածնի կուտակման միտումները</u>	80
<u>5.4.2. SO4-2 Առանձին կենսաբանական տեսակների բաշխման և թվաքանակի փոփոխման միտումները</u>	81
<u>5.4.3. SO4-3 Կենսաբազմազանության կարևոր շրջանների պահպանվող տարածքների ծածկույթի փոփոխության միտումները</u>	82
<u>5.5. Ռազմավարական նպատակ 5</u>	85
<u>5.5.1. SO5-1 Երկկողմանի և բազմակողմ հանրային ռեսուրսներ</u>	85
<u>5.5.2. SO5-2 Ներպետական ռեսուրսներ</u>	90
<u>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ</u>	98

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում Միավորված ազգերի կազմակերպության «Անապատացման դեմ պայքարի...» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) իրականացման մասին 8-րդ Ազգային զեկույցը (այսուհետ՝ Զեկույց) կազմված է «Կոնվենցիայի 2017-2018 թվականների զեկույցների մշակման գործընթացի ձեռնարկ»-ում ներկայացված ձևաչափով և տեղադրված Կոնվենցիայի պաշտոնական կայքէջում՝ «online» ռեժիմով «PRAIS» պորտալում:

ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի կոնվենցիայի» 2018-2030 թթ. «Կոնվենցիայի շրջանակային ռազմավարությունը» հաստատված է 7/COP.13 որոշմամբ: Որոշման համաձայն, ՄԱԿ-ի Կոնվենցիայի բոլոր շահակիր կողմերի և գործընկերների գործողությունների համար, 2018-2030թթ. ժամանակահատվածում այն կձառայի որպես 5 ռազմավարական նպատակների ուղեցույց:

Բոլոր Կողմ երկրներին PRAIS4 հարթակի միջոցով տրամադրվում են ենթադրյալ տվյալներ (default data): Այն երկրները, որոնք ունեն տիեզերական պատկերներից ստացված տեղեկատվություն և տվյալներ, կարող են այն ներբեռնել PRAIS4 հարթակում, իսկ եթե ոչ, ապա նրանք օգտվում են PRAIS4 հարթակի միջոցով տրամադրված ենթադրյալ տվյալներից:

Հայաստանի Հանրապետությունում 2016-2019 թթ. տիեզերական պատկերներից ստացված համապատասխան տեղեկատվության և տվյալների բացակայության պատճառով, զեկույցի որոշ բաժիններում օգտագործվել են տրամադրված ենթադրյալ տվյալները:

PRAIS4 հարթակում բազային ժամանակաշրջան համարվում է 2000-2015թթ. և հաշվետու ժամանակաշրջան՝ 2016-2019թթ.:

Ծրագիրն իրականացվում է Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (GEF) – ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի (UNEP) Հայաստանի Հանրապետությանը տրամադրած դրամաշնորհի միջոցով՝ ուղղված ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայի 8-րդ Ազգային զեկույցի պատրաստմանը և «Հողերի դեգրադացիայի չեզոքացման» թիրախային ցուցանիշների հաստատմանը:

Ծրագրի իրականացման նպատակն է վերլուծել Հայաստանի՝ Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացները 2021-22թթ. ընթացքում և պատրաստել Կոնվենցիայի կողմ երկրների 7/COP.13 և 13/COP.13 որոշումների պահանջներին համապատասխան 8-րդ Ազգային զեկույցը 2016-2019թթ. ժամանակաշրջանի համար ու ներկայացնել առցանց ռեժիմով՝ PRAIS4 հարթակի միջոցով:

2018թ.-ի հաշվետվության գործընթացից հետո Կողմ երկրների կողմից Կատարողականի վերանայման և իրականացման գնահատման (PRAIS 3) համակարգն արդիականացվել է՝ համապատասխանեցնելով ընթացիկ համակարգերի կառուցվածքին և համաձայն Կողմերի Կոնֆերանսի կողմից COP-14-ի նստաշրջանում ներկայացված պահանջների: PRAIS 4-ը, ի թիվս այլ գործիքների, կառաջարկի հետևյալ բարելավումները PRAIS 3-ի նկատմամբ.

- Այն ավելի հարմար է օգտագործման համար, ունի առավել մատչելի կառուցվածք, ներառյալ՝ համացանցային հաշվետվությունների ձևերը, որոնք նախապես համալրված են տվյալների գլոբալ աղբյուրներից կանխադրված տվյալներով: Ձևաթղթերում մուտքագրված տեղեկատվությունը կամփոփվի առանձին երկրների հաշվետվություններում, որոնք հասանելի են համակարգից դուրս ներքեռնելու և համօգտագործելու համար:

- Համակարգը նաև հասանելի կդարձնի SO 1-ից մինչև SO 4-ի խախտված տարածքների վերաբերյալ լրացուցիչ տվյալների դաշտը:

- Առկա է կենտրոնացված տվյալների բազա՝ երկրների կողմից ներկայացված տվյալներն անվտանգ պահելու և կառավարելու համար:

- Նոր ֆունկցիոնալ հնարավորություններ՝ մեծ աշխարհատարածական տվյալների հավաքածուներ ստանալու և կառավարելու համար. այն թույլ կտա օգտատիրոջը սահմանել, օրինակ, հողի առավելագույն դեգրադացիայի թեժ կետերի գտնվելու վայրը և սահմանները կամ հողերի դեգրադացիայի ոչ մարդածին չեզոքացման թիրախների տարածքները:

Կողմ երկրներին կտրամադրվեն հաշվետվության գործիքներ.

- **PRAIS 4 Օգտագործողի ուղեցույց**, որն ապահովում է համակարգ մուտք գործելու և օգտագործելու քայլ առ քայլ ընթացակարգեր,

- **Հաշվետվությունների կազմման ուղեցույց**, որը քայլ առ քայլ բացատրում է ազգային հաշվետվությունների պատրաստման ձևաչափը,

- **Թարմացված բառարան**՝ հաշվետվության տերմինների և սահմանումների համար,

- **Լավագույն պրակտիկայի ուղեցույցի** 2-րդ տարբերակ՝ ԿՁՆ 15.3.1 ցուցիչին հասնելու համար,

- **Լավագույն պրակտիկայի ուղեցույցի** ՄԱԿ-ի ՃՇՀԱՀ-ի ռազմավարական նպատակ 3-ի շրջանակներում ազգային հաշվետվության ներկայացման տարբերակ:

Համաձայն Կոնվենցիայի 26-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր Կողմ երկիր ներկայացնում է տեղեկատվություն՝ երկրում իրականացված քայլերի մասին, որի ձևաչափը և ներկայացման ժամկետը որոշում է Կոնվենցիայի կողմերի համաժողովը: Այդ

նպատակով Կոնվենցիայի իրականացման գործընթացը հսկելու համար մշակվել է տեղեկատվության և մոնիթորինգի համակարգ, որը ներառում է.

- Երկրի պրոֆիլը,
- Կոնվենցիայի 2018-2030 թթ. շրջանակային ռազմավարության ռազմավարական նպատակների առաջընթացի ցուցանիշները և կամավոր թիրախների որոշումը,
- Հողերի դեգրադացիայի չեզոքացման թիրախների որոշման գործընթացը,
- Կոնվենցիայի իրականացման համար ֆինանսական հոսքերի ակնարկը, ֆինանսական և ոչ ֆինանսական ռեսուրսները (ըստ ստանդարտ ձևերի),
- Քաղաքականությունը և պլանավորումը (ըստ ստանդարտ ձևերի),
- Հողերի կայուն կառավարման հետ կապված լավագույն փորձառությունը (ըստ ստանդարտ ձևերի):

Ելնելով վերոնշյալից և հիմք ընդունելով Կոնվենցիայի կողմերի համաժողովների 3/COP.12, 7/COP.13, 13/COP.13, 11/COP.14 և 11/COP.15 որոշումների պահանջները՝ ծրագրով նախատեսվում է մշակել Հայաստանում ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի իրականացման մասին 8-րդ Ազգային զեկույցը

2. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 8-ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի իրականացման նպատակն է վերլուծել Հայաստանի՝ Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացները 2021-22թթ. ընթացքում և պատրաստել Կոնվենցիայի կողմ երկրների 7/COP.13 և 13/COP.13 որոշումների պահանջներին համապատասխան 8-րդ Ազգային զեկույցը 2016-2019թթ. ժամանակաշրջանի համար ու ներկայացնել առցանց ռեժիմով PRAIS4 հարթակի միջոցով:

Սույն առաջադրանքի խնդիրներն են.

- Ամփոփել Հայաստանում անապատացման երևույթների մասին առկա տեղեկատվությունը,
- Ապահովել 8-րդ Ազգային զեկույցի քննարկումներում բոլոր շահակիր կողմերի արդյունավետ մասնակցությունը,
- Նպաստել Հայաստանում հողերի դեգրադացիայի չեզոքացման թիրախների որոշման գործընթացին,
- Բացահայտել անապատացման երևույթներ առաջացնող հիմնական գործոնները,

- Նպաստել հողերի կայուն կառավարման պատշաճ համակարգի ստեղծմանը և լավագույն փորձի ներդրմանը,
- Բացահայտել հողերի մոնիթորինգի տվյալների հավաքագրման և տարածման համակարգում առկա հիմնական բացթողումները,
- Ապահովել 8-րդ Ազգային զեկույցի մոնիթորինգի ցուցանիշների օգտագործման և կիրառման, ինչպես նաև հասարակության իրազեկվածության բարձրացման ուղղությամբ ուսուցման և խորհրդատվությունների տրամադրման գործընթացներում բոլոր շահակիր կողմերի մասնակցությունը:

2.1. Օրդոսում ընդունված «Կոնվենցիայի 2018-2030 թթ. շրջանակային ռազմավարություն» 7/COP.13 որոշում:

«Շրջանակային ռազմավարություն» 7/COP.13 որոշում «ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի շրջանակային ռազմավարություն 2018-2030 թվականների համար»: Նոր ռազմավարությունով վերանայվել է Կոնվենցիայի նախորդ 10-ամյա ռազմավարությունը (2008-2018թթ.), հաստատվել է 5 ռազմավարական նպատակ (ավելացել է երաշտների հետ կապված նոր ռազմավարական նպատակը), 17 ակնկալվող ազդեցություն և 10 առաջընթացի ցուցանիշ:

Շրջանակային ռազմավարությունը կնպաստի.

- Կոնվենցիայի և Կայուն զարգացման օրակարգի նպատակների (մինչև 2030), մասնավորապես, կայուն զարգացման նպատակ 15-ին և 15.3 խնդրին հասնելուն,
- Տուժած բնակչության կենսապայմանների բարելավմանը,
- Էկոհամակարգային ծառայությունների բարելավմանը:

Ռազմավարական նպատակներն են.

Ռազմավարական նպատակ 1–Բարելավել խախտված էկոհամակարգերի վիճակը և հասնել հողերի դեգրադացիայի չեզոքացման հաշվեկշռին:

Ռազմավարական նպատակ 2–Բարելավել դեգրադացված տարածքների ազդեցությանը ենթարկված բնակչության կյանքի պայմանները:

Ռազմավարական նպատակ 3–Նվազեցնել երաշտի հետևանքները՝ բարձրացնելով բնակչության խոցելի խմբերի և էկոհամակարգերի կայունությունը:

Ռազմավարական նպատակ 4–Կոնվենցիայի իրականացման արդյունավետության հաշվին համաշխարհային մակարդակով ապահովել էկոլոգիական օգուտները:

Ռազմավարական նպատակ 5–Մոբիլիզացնել հիմնական և լրացուցիչ ֆինանսական ու այլ ռեսուրսները համաշխարհային և ազգային մակարդակներում:

Վերը նշված ռազմավարական նպատակները կծառայեն որպես ուղեցույց Կոնվենցիայի բոլոր շահակիր կողմերի և գործընկերների գործողությունների համար 2018-2030թթ. ընթացքում:

Ռազմավարությունը կիրականացվի հիմնականում ազգային և տարածաշրջանային մակարդակներում գործողությունների միջոցով, Կոնվենցիայի հաստատությունների, գործընկերների և այլ համապատասխան շահակիր կողմերի աջակցությամբ:

Կողմ երկրները կրում են ռազմավարության իրականացման հիմնական պատասխանատվությունը:

Սույն ռազմավարության միջոցով և Կոնվենցիայով ամրագրված իրենց պարտավորություններին համապատասխան՝ Կողմ երկրները ձգտում են իրականացնել.

Աշխատանք 1. ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի իրականացման մասին 8-րդ Ազգային զեկույցի պատրաստման նախապատրաստական աշխատանքներ Գործողություն 1.1

Կատարողը, համագործակցելով Պատվիրատուի և Կոնվենցիայի ազգային համակարգողի հետ, պետք է վերանայի ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի իրականացման մասին 7-րդ Ազգային զեկույցի շրջանակներում հավաքագրված Հայաստանում անապատացմանն առնչվող փաստաթղթերի փաթեթը, մասնավորապես՝

- Գործող իրավական ակտեր և իրավական ակտերի նախագծեր (կոնվենցիաներ, օրենքներ և օրենսգրքեր, ենթաօրենսդրական ակտեր, կանոնադրություններ, ՀՀ կառավարության որոշումներ, գերատեսչական նորմատիվային ակտեր),
- Գործող ազգային ծրագրեր և ծրագրերի նախագծեր,
- Հայաստանում Կոնվենցիայի իրականացման մասին ազգային զեկույցներ,
- Կոնվենցիայի կողմ երկրների 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15 համաժողովների որոշումները ազգային զեկույցների վերաբերյալ,
- Օրդոսում ընդունված «Կոնվենցիայի 2018-2030 թթ. շրջանակային ռազմավարություն» 7/COP.13 որոշումը,
- Կոնվենցիայի քարտուղարության և այլ մարմինների կողմից մշակված 2020-22թթ. զեկույցների գործընթացի մշակման ձեռնարկ, և այլն,
- Գործողություն 1.1-ի իրականացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

Գործողություն 1.2

Կատարողը պետք է մշակի աշխատանքների իրականացման մեթոդաբանություն, ներառյալ՝ շահակիր կողմերի ներգրավման և համագործացության ձևերն ու միջոցները (շահակիր կողմեր կարող են հանդիսանալ ՀՀ շրջակա միջավայրի

նախարարության համապատասխան վարչությունները, բաժինները և ստորաբաժանումները, համապատասխան գիտական և կրթական հաստատությունները, հասարակական կազմակերպությունները և այլն): 8-րդ Ազգային զեկույցի բովանդակությունը պետք է համապատասխանի հետևյալ ռազմավարական նպատակների պահանջներին.

Ռազմավարական նպատակ 1 – Բարելավել խախտված էկոհամակարգերի վիճակը, պայքարել անապատացման/հողերի դեգրադացիայի դեմ, նպաստել հողային ռեսուրսների կայուն կառավարմանը և հասնել հողերի դեգրադացման չեզոք հաշվեկշռի: Այս նպատակի շրջանակներում պահանջվում է գնահատել հետևյալը.

- Հողային ծածկույթի փոփոխության միտումները,
- Հողային ծածկույթի փոփոխությունները, ըստ տարիների հողային ծածկույթի հիմնական դասերի բաշխումը (կմ²)՝ նշելով փոփոխությունները,
- Հողերի արդյունավետության կամ հողերի նպատակային օգտագործման միտումները,
- Հողերի արդյունավետության դինամիկան,
- Ածխածնային ստորգետնյա և վերգետնյա կուտակումների միտումները,
- Հողում օրգանական ածխածնի պաշարը,
- Դեգրադացիայի ենթարկված հողերի մասնաբաժինը հողային ընդհանուր ծածկույթի նկատմամբ:

Ռազմավարական նպատակ 2 – Բարելավել տուժած բնակչության կյանքի պայմանները: Այս նպատակի շրջանակներում պահանջվում է գնահատել հետևյալը.

- Հարաբերական աղքատության գծից ցածր և/կամ տուժած տարածքներում եկամուտների անհավասարության պայմաններում ապրող բնակչության փոփոխության միտումները,
- Տուժած տարածքներում անվտանգ խմելու ջրի հասանելիության միտումները,
- Հողի դեգրադացիայի արդյունքում տուժած բնակչության մասնաբաժնի փոփոխության միտումները՝ տարբերակված ըստ սեռի:

Ռազմավարական նպատակ 3 – Մեղմել երաշտի հետևանքները, հարմարվել և կառավարել դրանք՝ խոցելի խմբերի և էկոհամակարգերի կայունության բարձրացման նպատակով: Այս նպատակի շրջանակներում պահանջվում է գնահատել հետևյալը.

- Երաշտի ենթարկված հողերի մասնաբաժնի փոփոխության միտումները հողերի ընդհանուր ծածկույթի նկատմամբ,
- Երաշտի արդյունքում տուժած ամբողջ բնակչության մասնաբաժնի փոփոխության միտումները,
- Երաշտի խոցելիության աստիճանի միտումները:

Ռազմավարական նպատակ 4 – Գեներացնել գլոբալ բնապահպանական օգուտներ ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի Կոնվենցիայի արդյունավետ իրականացման միջոցով: Այս նպատակի շրջանակներում պահանջվում է գնահատել հետևյալը.

- Ածխածնային ստորգետնյա և վերգետնյա կուտակումների միտումները,
- Բուսական և կենդանական աշխարհի առանձին տեսակների թվաքանակի և բաշխման միտումները,
- Կենսաբազմազանության կարևոր շրջանների պահպանվող տարածքների ծածկույթի փոփոխության միտումները:

Ռազմավարական նպատակ 5 - Հավաքագրել Կոնվենցիայի իրականացման հիմնական և լրացուցիչ ֆինանսական ու այլ ռեսուրսներ՝ հաստատելով արդյունավետ գործընկերային հարաբերություններ համաշխարհային և ազգային մակարդակներում: Այս նպատակի շրջանակներում պահանջվում է գնահատել հետևյալը.

- Երկկողմանի և բազմակողմ հանրային ռեսուրսներ,
- Ներպետական ռեսուրսներ,
- Միջազգային և ներքին մասնավոր ռեսուրսներ,
- Տեխնոլոգիաների փոխանցում,
- Հետագա աջակցություն՝ Կոնվենցիայի իրականացման հետ կապված գործողություններին:

Համաձայն ՀՀ-ԲՕ-Ա-ԳՀԾՁԲ-22/179-1 պայմանագրի Աշխատանք 1-ի Փուլ 1. ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի իրականացման մասին 8-րդ Ազգային զեկույցի պատրաստման նախապատրաստական աշխատանքների իրականացման, հաշվետվողականության կառուցվածք պետք է ներառվեն և ընդգրկվեն հետևյալ փաստաթղթերը.

- Հայաստանի անապատացման վերաբերյալ թարմացված գործող իրավական ակտերի, իրավական ակտերի նախագծերի, ազգային ծրագրերի և ծրագրերի նախագծերի, ազգային զեկույցների, ինչպես նաև Գործողություն 1.1-ի շրջանակներում հիշատակված այլ փաստաթղթերի և հրատարակված նյութերի անվանացանկ և փաթեթի վերաբերյալ վերլուծություն,
- «Հայաստանում ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի իրականացման մասին» Ազգային զեկույցներ:

Հայաստանը 2018 թվականին մշակել և Կոնվենցիայի քարտուղարություն է ներկայացրել «Հայաստանում ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի իրականացման մասին» 7-րդ Ազգային զեկույցը՝ տեղադրված հետևյալ հղմամբ՝

https://prais.unccd.int/unccd/reports?field_year_target_id=All**HYPERLINK**

["https://prais.unccd.int/unccd/reports?field_year_target_id=All&field_country_target_id=Armenia&items_per_page=25"](https://prais.unccd.int/unccd/reports?field_year_target_id=All&field_country_target_id=Armenia&items_per_page=25)**HYPERLINK**

["https://prais.unccd.int/unccd/reports?field_year_target_id=All&field_country_target_id=Armenia&items_per_page=25"](https://prais.unccd.int/unccd/reports?field_year_target_id=All&field_country_target_id=Armenia&items_per_page=25)field country target id=ArmeniaHYPERLINK

["https://prais.unccd.int/unccd/reports?field_year_target_id=All&field_country_target_id=Armenia&items_per_page=25"](https://prais.unccd.int/unccd/reports?field_year_target_id=All&field_country_target_id=Armenia&items_per_page=25)&HYPERLINK

["https://prais.unccd.int/unccd/reports?field_year_target_id=All&field_country_target_id=Armenia&items_per_page=25"](https://prais.unccd.int/unccd/reports?field_year_target_id=All&field_country_target_id=Armenia&items_per_page=25)items per page=25)

Ներկայացվել է նաև առանձին լրացուցիչ տեղեկատվություն, որտեղ վերլուծվել են Հայաստանում երաշտների և երաշտի հետևանքները նվազեցնելու միջոցները՝ <https://prais.unccd.int/sites/default/files/2018-2/OSO3%20additional%20information.pdf>

Հայաստանի անապատացման վերաբերյալ հավաքագրված և/կամ ձեռք բերված գործող իրավական ակտերի և իրավական ակտերի նախագծերի ցանկ

Աղյուսակ 1.

Հ/Հ	Անվանումը	Տիպը	Տարեթիվ	Համար
•	ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր – ստորագրվել է 2017թ. նոյեմբերի 24-ին	Համաձայնագիր	Ուժի մեջ է մտել 2021թ. մարտի 1-ին	ՀՀ վարչապետի 2019 թ. հունիսի 1-ի N 666 - Լ որոշում
•	«Արարատյան, Հրազդանի և Ախուրյանի ավազանային կառավարման տարածքներում սակավաջրության և երաշտի մասին»	ՀՀ կառավարության որոշում	18.09.2014	N 1111-Ն
•	Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների Ազգային մակարդակով սահմանված գործողությունները: Հավելված ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի N 610 - Լ որոշման:	ՀՀ կառավարության որոշում	22.04.2021	N 610 – Լ
•	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների	ՀՀ կառավարության որոշում	19.12.2019	N 1886-Լ

	<p>ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության կատարմանն ուղղված 2020-2022 թվականների միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը հաստատելու մասին:</p>			
•	<p>ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգման կարգը հաստատելու մասին»</p>	<p>ՀՀ կառավարության որոշում</p>	<p>11.04.2019թ</p>	<p>N 431-Ն</p>
•	<p>«Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» որոշման համաձայն ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետությունում հնարավոր երաշտի կամ սակավաջրության կանխարգելման, երաշտի կամ սակավաջրության հետևանքների վերացման կամ մեղմման, հնարավոր խնդիրների բացահայտման և օպերատիվ արձագանքման միջոցառումների համակարգման, ինչպես նաև ոռոգման ոլորտի արդյունավետության բարձրացման ռազմավարության մշակման աշխատանքների համակարգման նպատակով:</p>	<p>ՀՀ Վարչապետի որոշում</p>	<p>02.07.2021թ</p>	<p>N712-Ա</p>
•	<p>«Մինչև 3 հա հողատարածքներում կաթիլային, անձրևացման ոռոգման համակարգերի ներդրման դեպքում ջրօգտագործողներին ոռոգման ջրի վարձավճարի փոխհատուցման ծրագիրը հաստատելու մասին» որոշման նպատակն է խթանել գյուղատնտեսական հողատարածքներում ոռոգման արդյունավետ եղանակների կիրառումը՝ իրենց հողակտորներում կաթիլային, անձրևացման ոռոգման համակարգեր ներդնող տնտեսավարողներին պետական աջակցություն ցուցաբերելու միջոցով, նպաստել ոռոգման ջրի խնայողաբար և արդյունավետ օգտագործմանը:</p>	<p>ՀՀ կառավարության որոշում</p>	<p>14.10.2021</p>	<p>N1695-L</p>
•	<p>Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա՝ Անապատացման դեմ պայքարի մասին</p>	<p>Կոնվենցիա</p>	<p>14.10.19</p>	

	երաշտի և/կամ անապատացման ենթարկված երկրներում, մասնավորապես Աֆրիկայում		94	
•	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա	Կոնվենցիա	21.03.19 94	
•	Կոնվենցիա կենսաբանական բազմազանության մասին	Կոնվենցիա	05.06.19 92	
•	Կոնվենցիա մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին	Կոնվենցիա	05.12.19 93	
•	Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիա	Կոնվենցիա	20.10.20 00	
•	<p>ՍևHYPERLINK</p> <p>"http://scs.am/uploads/Orensdrutyun/paymanagrer_hama dzaynagrer_hushagrer/paymanagir-Arm-Bel-Sevan.pdf"անա լճում Հայաստանի HYPERLINK</p> <p>"http://scs.am/uploads/Orensdrutyun/paymanagrer_hama dzaynagrer_hushagrer/paymanagir-Arm-Bel-Sevan.pdf"ևHYPERLINK</p> <p>"http://scs.am/uploads/Orensdrutyun/paymanagrer_hama dzaynagrer_hushagrer/paymanagir-Arm-Bel-Sevan.pdf"Բելառուսի ազգային հարստություն հանդիսացող քաղցրահամ ջրամբարների էկոհամակարգերի ուսումնասիրման միջազգային գիտագործնական կենտրոն-HYPERLINK</p> <p>"http://scs.am/uploads/Orensdrutyun/paymanagrer_hama dzaynagrer_hushagrer/paymanagir-Arm-Bel-Sevan.pdf"բիոլոգիական կայան ստեղծելու մասին պայմանագիր</p>	Պայմանագիր	14.10.20 13	
•	Կոնվենցիա Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին	Կոնվենցիա	25.06.19 98	
•	«Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես ջրլող թռչունների	Կոնվենցիա	06.07.19	

	բնադրավայրերի մասին» կոնվենցիա (Ռամսարի կոնվենցիա)		93	
•	ՀՀ անտառային օրենսգիրք	օրենսգիրք	24.10.2005	ՀՕ-211
•	ՀՀ հողային օրենսգիրք	օրենսգիրք	02.05.2001	ՀՕ-185
•	Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին	օրենք	20.11.2001	ՀՕ-264
•	Բնապահպանական վերահսկողության մասին	օրենք	11.04.2005	ՀՕ-82-Ն
•	Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին	օրենք	27.11.2006	ՀՕ-211-Ն
•	Բուսական աշխարհի մասին	օրենք	23.11.1999	ՀՕ-22
•	Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին	օրենք	15.05.2001	ՀՕ-188
•	Կենդանական աշխարհի մասին	օրենք	03.04.2000	ՀՕ-52
•	Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին	օրենք	27.11.2006	ՀՕ-185-Ն
•	Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին	օրենք	08.04.2008	ՀՕ-36-Ն
•	Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին	օրենք	21.06.2014	ՀՕ-110-Ն
•	Սևանա լճի մասին	օրենք	15.05.2001	ՀՕ-190
•	Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը	օրենք	14.12.2001	ՀՕ-276

	հաստատելու մասին			
•	ՀՀ վարչատարածքային բաժանման մասին	օրենք	07.11.1995	ՀՕ-18
•	ՊՈԱԿ-ների մասին	օրենք	23.10.2001	ՀՕ-248
•	Երաշտի հետևանքների վերացման մասին	օրենք	20.03.2001	ՀՕ-161
•	Քաղաքաշինության մասին	օրենք	05.05.1998	ՀՕ-217
•	Պարենային անվտանգության ապահովման մասին	օրենք	07.05.2002	ՀՕ-339
•	Թափոնների մասին	օրենք	24.11.2004	ՀՕ-159
•	Գյուղատնտեսական հողերի մելիորացիայի մասին	օրենք	20.05.2005	ՀՕ-121-Ն
•	ՀՀ Ազգային ժողովի որոշումը Միավորված ազգերի կազմակերպության 1994 թվականի հունիսի 17-ի «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիային միանալու մասին	Ազգային ժողովի որոշում	23.06.1997	Ն-187-1
•	Բնության հատուկ պահպանվող տարածքներում մոնիթորինգի կազմակերպման և իրականացման կարգը սահմանելու մասին	կառավարության որոշում	30.08.2007	N 1044-Ն
•	Բնության հատուկ պահպանվող տարածքների պետական կադաստրի վարման կարգը սահմանելու մասին	կառավարության որոշում	20.03.2008	
•	Հատուկ պահպանվող ավազանային տարածքների կամ դրանց որևէ մասի ցանկը հաստատելու մասին	կառավարության որոշում	19.02.2009	N 259-Ն
•	Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգը	կառավարության որոշում	17.11.2001	N 1121-Ն
•	Գիտական և գիտատեխնիկական պետական	կառավարության	17.11.2001	N

	ծրագրերի նպատակային-ծրագրային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին	որոշում	01	1123-Ն
•	«Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»	կառավարության որոշում	08.09.2011	N 1396-Ն
•	«Հողերի օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման կարգը հաստատելու մասին»	կառավարության որոշում	02.05.2003	N 625-Ն
•	«ՍԵՎԱՆ» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին»	կառավարության որոշում	18.12.2008	N 1563-Ն
•	«Բնության հատուկ պահպանվող տարածքների հողամասերը վարձակալության (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով միջգերատեսչական մրցույթային հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին»	կառավարության որոշում	18.12.2008	N 1578-Ն
•	«ՀՀ հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2006-2015 թվականների հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին»	կառավարության որոշում	2006-2015	
•	«Հայաստանի Հանրապետությունում հողաշինարարության կազմակերպման կարգը սահմանելու մասին»	կառավարության որոշում	03.02.2005	N 125-Ն
•	«Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին»	կառավարության որոշում	12.04.2001	N 286
•	«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»	կառավարության որոշում	29.01.2010	N 71-Ն

•	«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»	կառավարության որոշում	29.01.2010	N 72-Ն
•	«Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող` ՀՀ պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին»	կառավարության նիստի քաղվածք	08.12.2016	N 49-8
•	«Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին»	կառավարության արձանագրային որոշում	27.05.2015	N23

Հայաստանի անապատացման վերաբերյալ հավաքագրված և/կամ ձեռք բերված գործող Ազգային ծրագրերի և ծրագրերի նախագծերի, ինչպես նաև Ազգային զեկույցների ցանկ

Աղյուսակ 2.

Հ/Հ	Անվանումը	Տիպը	Տարեթիվ
•	Հայաստանում ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի երաշտի և/կամ անապատացման ենթարկված երկրներում, մասնավորապես Աֆրիկայում» կոնվենցիայի իրականացման մասին» 1-7 Ազգային զեկույցներ	Ազգային զեկույց	2000, 2002, 2006, 2010 և 2012, 2014, 2018
•	Հայաստանում «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի իրականացման մասին» 1-6 Ազգային զեկույցներ	Ազգային զեկույց	1999 2001 2006 2009 2014 2018
•	ՀՀ առաջին Ազգային զեկույցը կլիմայի փոփոխության ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի ներքո	Ազգային զեկույց	1998
•	Կլիմայի փոփոխության մասին ազգային հաղորդագրություններ	Ազգային հաղորդագրություն	2010 2015 2020
•	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին»	զեկույց	2016

	<p>շրջանակային կոնվենցիայի ներքո ՀՀ «HYPERLINK "http://www.mnp.am/uploads/1/1509988693BUR-Report_arm.pdf" Երկամյա HYPERLINK "http://www.mnp.am/uploads/1/1509988693BUR-Report_arm.pdf" _HYPERLINK "http://www.mnp.am/uploads/1/1509988693BUR-Report_arm.pdf" ստաշոնթացի HYPERLINK "http://www.mnp.am/uploads/1/1509988693BUR-Report_arm.pdf" _HYPERLINK "http://www.mnp.am/uploads/1/1509988693BUR-Report_arm.pdf" ստաշին HYPERLINK "http://www.mnp.am/uploads/1/1509988693BUR-Report_arm.pdf" _HYPERLINK "http://www.mnp.am/uploads/1/1509988693BUR-Report_arm.pdf" գեկույց HYPERLINK "http://www.mnp.am/uploads/1/1509988693BUR-Report_arm.pdf"»</p>		2018 2021
•	ՀՀ ջերմոցային գազերի Ազգային կադաստրի հաշվետվություններ		2010 2012 2014 2016 2017
•	"ՌԻՈ+20" Ազգային գնահատման գեկույց	գեկույց	2012
•	ՀՀ Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների երկրորդ ազգային ծրագիր	ծրագիր	2008
•	ՀՀ էկոլոգիական կրթության ռազմավարական ծրագիր	ծրագիր	2007

Համաձայն սույն հաշվետվությունում ներառված Տեխնիկական բնութագրի, գործողություն 1.1-ում նշված այլ փաստաթղթերի և հրատարակված նյութերի ցանկը

Աղյուսակ 3.

Հ/Հ	Անվանումը	Տիպը	Տարեթիվ	Համար
•	«Անապատացման դեմ պայքարի «10-ամյա ռազմավարությունը և Կոնվենցիայի իրականացման ուժեղացման 2008-2018 թթ. համար գործունեության շրջանակները	որոշում	2007	3/COP.8

	(Ռազմավարությունը)			
•	«Կողմերի կոնֆերանսին ներկայացման ենթակա զեկույցների որակի, ձևի ինչպես նաև տեղեկատվության ներկայացման գործընթացների կատարելագործումը»	որոշում	2009	13/COP.9
•	«Առաջարկություններ այն մասին, թե ինչպես լավագույնս չափել առաջընթացը դեպի ռազմավարական նպատակներ 1, 2 և 3...»	որոշում	2009	17/ COP.9
•	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիա	փաստաթուղթ	2009	ICCD/CRIC(8)/5/Add.1
•	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիա	փաստաթուղթ	2009	ICCD/CRIC(8)/5/Add.2
•	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիա	փաստաթուղթ	2009	ICCD/CRIC(8)/5/Add.4
•	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիա	փաստաթուղթ	2009	ICCD/CRIC(8)/5/Add.5
•	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիա	փաստաթուղթ	2009	ICCD/COP(9)/2/Add.1
•	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիա	փաստաթուղթ	2010	ICCD/CRIC(9)/INF.2
•	«Կոնվենցիայի իրականացման գնահատումը արդյունավետության ցուցանիշների հիման վրա»	որոշում	2011	13/COP.10
•	«Իրականացման գնահատման հետ կապված իրականացման գնահատումը, ներառյալ արդյունավետության և ազդեցության ցուցանիշները, մեթոդաբանությունը և հաշվետվության ընթացակարգերը»	որոշում	2011	14/COP.10
•	«Առաջարկություններ, թե ինչպես կարելի է լավագույնս որոշել առաջընթացը դեպի 1, 2 և 3	որոշում	2011	19/COP.10

	ռազմավարական նպատակները»			
•	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիա	փաստաթուղթ	2011	ICCD/COP(10)/INF.9
•	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիա	փաստաթուղթ	2011	ICCD/COP(10)/CST/3
•	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիա	փաստաթուղթ	2013	ICCD/COP(11)/23/Add.1
•	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիա	փաստաթուղթ	2015	ICCD/COP(12)/20/Add.1
•	«Հաղորդակցման ընթացակարգերի և Կողմերի համաժողովին ներկայացվելիք զեկույցների որակի և ձևաչափի բարելավում»	որոշում	2015	15/COP.12
•	«Հաղորդակցման ընթացակարգերի և Կողմերի համաժողովին ներկայացվելիք զեկույցների որակի և ձևաչափի բարելավում»	որոշում	2017	15/COP.13
•	Օրդոսում ընդունված «Կոնվենցիայի շրջանակային ռազմավարությունը 2018-2030 թվականների համար»	որոշում	2017	7/COP.13
•	Դեգրադացված հողի համամասնությունը ընդհանուր հողատարածքի վրա պրակտիկ մեթոդական ուղեցույց	ձեռնարկ	09.2017	SDG Indicator 15.3.1
•	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիա	փաստաթուղթ	2019	ICCD/COP (14)/23/Add.1
•	«Հաղորդակցման ընթացակարգերի և Կողմերի համաժողովին ներկայացվելիք զեկույցների որակի և ձևաչափի բարելավում»	որոշում	2019	11/COP.14
•	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիա	փաստաթուղթ	2022	ICCD/COP (15)/23/Add.1

•	«Հաղորդակցման ընթացակարգերի և Կողմերի համաժողովին ներկայացվելիք զեկույցների որակի և ձևաչափի բարելավում»	որոշում	2022	11/COP.15
•	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի քարտուղարության և այլ մարմինների կողմից մշակված «Արդյունավետության տեսության և իրականացման գնահատման համակարգ օգտագործողի ձեռնարկ»	PRAIS 4 ձեռնարկ	2021թ.	
•	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի 7-րդ ազգային զեկույցի 2017-2018թթ. հաշվետվության պրոցեսների վերաբերյալ մեթոդական ուղեցույց	PRAIS 3 ձեռնարկ	2017թ.	
•	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի 7-րդ ազգային զեկույցի 2017-2018թթ. հաշվետվության պրոցեսների վերաբերյալ մասնագիտական տերմինաբանական բառարան	PRAIS 3 ձեռնարկ	2017թ.	
•	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի 7-րդ ազգային զեկույցի 2018թ. հաշվետվության մեթոդների և մեկնաբանությունների ուղեցույց	PRAIS 3 ձեռնարկ	2017թ.	
•	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի 7-րդ ազգային զեկույցի 2018թ. Լավագույն պրակտիկայի ուղեցույց ԿԶՆ ցուցիչ 15.3.1 Տարածքի դեգրադացված մասնաբաժինն ընդհանուր հողատարածքի նկատմամբ	PRAIS 3 ձեռնարկ	2017թ.	

3. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

- «ՄԱԿ ԿՓՇԿ ներքո Հայաստանի 4-րդ ազգային հաղորդագրության և երկամյա առաջընթացի 2-րդ զեկույց» -ի պատրաստում, 2016-2020թթ.: Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ/ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր:

ԳԷՀ՝ 852 000 ԱՄՆ դոլար, համաֆինանսավորում՝ 575 000 ԱՄՆ դոլար, որից՝ 75 000 ԱՄՆ դոլար ՄԱԿ-ի ԶԾ, 500 000 ԱՄՆ դոլար ՀՀ կառավարություն:

- «Հողերի կայուն կառավարումը արտադրողականության բարձրացման համար»՝ 2016-2021թթ.: Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ/ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ /IFAD/ ՀՀ կառավարության ԾԻԳ:

27 մլն. ԱՄՆ դոլար, ԳԷՀ դրամաշնորհ՝ 4.7 մլն. ԱՄՆ դոլար:

- «Ընտրված տարածքներում ագրոտնտեսարածային միջոցառումների և նոր հողերի ընտրություն» ծրագիրն իրականացվում է Սյունիքի մարզի Գորիս համայնքի Խնձորեսկ և Հարժիս բնակավայրերում, Սիսիան համայնքի Սպանդարյան, Ույծ, Մուծք, Բոնակոթ, Տոլորս, Շաքի, Շաղատ բնակավայրերում: 222.59հա ընդհանուր տարածքում տնկվել է 597851 ծառ և ցանվել 8377.8 կգ կաղնու սերմ:

Իրականացնող՝ ՀՀ կառավարության ԾԻԳ /ԿՏԲԿ Հայաստան, 2021 նոյեմբեր-2023 մարտ: 44.990ԱՄՆ դոլար:

- «Երաշտի համապարփակ կառավարում Հայաստանում» ծրագիր: Հայաստանում երաշտի կառավարման համակարգի վերլուծություն, թույլ կողմերի և բացերի վերհանում: Ծրագիրն իրականացվել է Հայաստանի ազգային և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի գլոբալ ջրային համագործակցության կողմից:

Ծրագիրը ֆինանսավորվում է՝ NOAA Funds-ի կողմից՝ Գլոբալ ջրային գործընկերության միջոցով (Գործողություն 3. Երաշտի վերաբերյալ որոշումների աջակցություն), 11.500 ԱՄՆ դոլար:

- «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության (ԳԱՏՕ)» ծրագիր: Նվազեցնել Արարատյան հարթավայրի ստորգետնյա ջրերի արդյունահանման աճը, աջակցել Հայաստանի կառավարությանը կառավարման համակարգի հարցում՝ բարելավված տվյալների հավաքագրման և վերլուծության միջոցով՝ ապահովելով գործիքներ, որպեսզի տեղեկացնի ստորգետնյա ջրերի տեղաբաշխման և օգտագործման վերաբերյալ որոշումների մասին, հիմնվելով ժամանակակից գիտական մոտեցումների վրա:

ԱՄՆ ՄԶԳ, 4.991.630.00 ՀՀ դրամ:

- «Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացումը և քիմիկատների կայուն կառավարման շրջանակներում կայուն օրգանական աղտոտիչներով (POPs)

աղտոտված տարածքների խնդիրների կարգավորումը Հայաստանում»: Նուրբարաշենի գերեզմանոցում տեղադրված ԿՕԱ-ի թափոնների, ինչպես նաև հանրապետության 24 տարբեր տարածքների պահեստարանների մնացորդային ժամկետանց թունաքիմիկատների լիկվիդացում:

- «Հայաստանյան գյուղական բնակավայրերում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավումը» տարածաշրջանային ծրագիր: Հայաստանում գյուղատնտեսական կենսաբազմազանության բազմակողմանի պահպանում, որն առաջ կբերի դրանց հարմարվողականությունը բնապահպանական և գյուղատնտեսական մարտահրավերներին՝ խթանելով ծրագրային տարածքներում գյուղացիական տնտեսությունների բարեկեցության բարելավումը:

Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ /ՄԱԿ-ի ՇՄԾ, 883 242 ԱՄՆ դոլար ԳԷՀ-ից.:

- «Կովկասի տարածաշրջանում անտառի գլոբալ մոնիթորինգի արդիականացում» ծրագիր: Նախագիծը հնարավորություն կտա

- բարելավել անտառների կառավարումը և կենսաբազմազանության պահպանումը՝ ապահովելով Հայաստանում հողօգտագործման կայուն կառավարման և անտառային լանդշաֆտների վերականգնման պլանավորման/իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն,

- հզորացնել ոլորտում հիմնական դերակատարություն ունեցող կառույցների կարողությունը՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվությունը հողօգտագործման որոշումների կայացման գործում:

ԳԷՀ/WRI/RECC Armenia, մեկնարկը 2019 մարտ, ավարտը 2023 սեպտեմբեր: 284.966 ԱՄՆ դոլար:

- «EU BSB 884 Շրջակա միջավայրի պահպանման վերաբերյալ համատեղ մոնիթորինգային ծրագիր՝ Սևծովյան ավազանի երկրների համար» (Հայաստան, Բուլղարիա, Ռումինիա, Վրաստան): Մեկնարկը 2019 հունիս, ավարտը 2022 սեպտեմբեր: ԵՄ/ԿՏԲԿ Հայաստան. 180.000 եվրո:

- «Հողի զրոյական չեզոքության պարտավորությունների իրականացում՝ կայուն կառավարման և դեգրադացված լանդշաֆտի վերականգնման միջոցով (PPG)»:

- Աջակցել Հայաստանին հողերի դեգրադացիայի չեզոքության ռազմավարության բոլոր չորս նպատակներին հասնելու հարցում, ներառյալ՝ մշակաբույսերի դեգրադացիայի դադարեցումը և ագրոէկոլոգիայի խթանումը,

- դեգրադացված հողերի երկու երրորդի անտառապատում և/կամ անտառվերականգնում,
- դադարեցնել անտառահատումները և բարելավել անտառների կառավարումը ողջ երկրում,
- դադարեցնել գերարածեցումը և բարելավել խոտհարքների կառավարումը ողջ երկրում:

GEF (FAO): Իրականացման ժամկետը՝ 13-փետրվար-2020 - 10-մար-2021, 100.000 ԱՄՆ դոլար:

- «Դերակատարների տեղական հզորացում (LEAD) Ջարգացման համար» ծրագիր: Ծրագիրն օգնում է Լոռու և Տավուշի տեղական բնակչությանը ակտիվ դերակատարություն ունենալ ներառական, ճկուն և կայուն տեղական զարգացման գործում՝ ամրապնդելով գործընկերության կառուցման մեխանիզմները, տարածքային համագործակցությունը, կազմակերպչական և ծառայությունների զարգացումը և ավելի լավ տեղական կառավարում ստեղծել՝ կիրառելով EU LEADER մոտեցման սկզբունքներն ու մեխանիզմները:

Նոյեմբեր 2020, սեպտեմբեր 2024: 1,878,883 ԱՄՆ դոլար, ԵՄ:

- Գյուղատնտեսության բնագավառում կլիմայական կայունության բարելավման համար բարենպաստ միջավայրի ստեղծում՝ հողային ռեսուրսների կառավարման գործիքների ինստիտուցիոնալ շրջանակների ստեղծում, լքված հողերի հիմնախնդրի լուծման նապատակով: Ծրագիրը կնպաստի գյուղատնտեսության և պարենային համակարգում կլիմայի փոփոխության հարմարվողականության գործընթացների հիմնական ուղղորդմանը՝ բարելավելով սերմնաբուծության ճկուն համակարգերը և խթանելով կլիմայակայուն սորտերի առաջխաղացումը (SDG 13): 2020-2022թթ, 405.000 ԱՄՆ դոլար, FAO:

- «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում» տարածաշրջանային ծրագիր: 2015-2020թթ, Աջակցություն կենսաբազմազանության մոնիթորինգի համակարգին, Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն /GIZ/:

- «Հայաստանում կլիմայի փոփոխության ազդեցության մեղմումը անտառային և դաշտային հրդեհների կառավարման ներուժի զարգացման միջոցով» ծրագիր՝ 2017-2020թթ.: Այս ծրագիրը միտված է մեղմելու կլիմայի փոփոխության պայմաններում անտառային և դաշտային հրդեհների ռիսկերի հրատապ խնդիրը՝ ազգային գործընկերների համար անհրաժեշտ տեխնիկական ներուժ զարգացնելու և կայուն

վերահսկողության, կանխարգելման և անտառային հրդեհների մարման ժամանակ պատասխանատվության բաշխման գործընթացում աջակցելու միջոցով:

ՄԱԶԾ/ ՌԴ, 1 000 000 ԱՄՆ դոլար:

• ԵՄ «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» (EU GAIA) **ծրագիր:** ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը (EU-GAIA) Հայաստանում ներկայումս Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի ամենախոշոր ծրագիրն է, որը ֆինանսավորվում է [Եվրոպական միության \(ԵՄ\) կողմից](#) և համաֆինանսավորվում է [Ավստրիական զարգացման համագործակցության \(ԱԶՀ\)](#) կողմից: Ծրագիրն իրականացվում է Ավստրիական զարգացման գործակալության (ԱԶԳ) և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից: Կառավարության կողմից ծրագրի գործընկերն է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: EU-GAIA ծրագրի ընդհանուր նպատակն է նպաստել Հայաստանի հյուսիսային մարզերի համընդհանուր և համաչափ ներառական զարգացմանը՝ կանաչ գյուղատնտեսության խթանման և տեղական արտադրանքի հավելյալ արժեքի ավելացման միջոցով: **Ծրագիրը կնպաստի կայուն, նորարարական և շուկայահեն ագրոբիզնեսի զարգացմանը, օրգանական գյուղատնտեսության զարգացմանը ամբողջ Հայաստանում:** Ծրագրի տևողությունը՝ 42 ամիս՝ 2019 թ. հոկտեմբերից մինչև 2023թ. մարտ: Թիրախային մարզեր՝ Շիրակ, Լոռի, Տավուշ:

2,200,221 ԱՄՆ դոլար ֆինանսավորում:

• ՄԱԶԾ-ԳԷՀ «Գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծում բնապահպանական կրթության և շահակիր կողմերի իրազեկվածության բարձրացման միջոցով» ծրագիր:

2019թ, 780,000 ԱՄՆ դոլար:

• «Սևանա լճի շրջակա միջավայրի պահպանություն» (EU4SEVAN/Environmental protection of lake Sevan_EU4SEVAN): Ծրագիրը ֆինանսավորվում է European Union (EU) և the German Federal Ministry for Economic Cooperation and Development (BMZ) և համատեղ իրականացվում է Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) և Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրի (UNDP) կողմից՝ Բազմագործընկերների ներդրման համաձայնագրի շրջանակներում: Ծրագրի մեկնարկը 2020թ սեպտեմբեր, ավարտը 2024թ. հոկտեմբեր, գումարը 563,708 ԱՄՆ դոլար:

• **WWF-ը 2015** թվականից իրականացնում է «Էկոմիջանցքների խթանում Հարավային Կովկասում» ծրագիրը: Ծրագրի 1-ին փուլի շրջանակներում ավելի քան 37,000 հա արոտավայրեր դրված են կայուն կառավարման սխեմայի ներքո: Ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում նախատեսվում է ընդլայնել այս տարածքը մինչև 80,000

հա: Թիրախ 6 բնակավայրերի հետ միասին մշակվել են արոտավայրերի կառավարման պլաններ և աջակցել են բնակավայրերին՝ ծրագրերի իրականացման գործում: Ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում նախատեսվում է մշակել ևս 6 արոտավայրերի կառավարման պլան՝ թիրախ բնակավայրերի համար:

- «Ազգային մակարդակով որոշված ներդրումների (NDCs) լծակում՝ զուտ գրոյական արտանետումների և կլիմայի նկատմամբ կայուն զարգացման համար՝ ի պատասխան կլիմայական արտակարգ իրավիճակների» ծրագիր: Բյուջե \$1 մլն: Նվիրատու՝ Ճապոնիայի կառավարություն, տևողությունը՝ 2023-2024 թթ.:

- «Արթիկ քաղաքին հարակից փակված քարհանքի թափոնների և ջրհեղեղների կառավարում» պիլոտային ծրագիր: Նախապատրաստական փուլ՝ 27 000 ԱՄՆ դոլար: Կլիմայի փոփոխությամբ պայմանավորված՝ նվազեցնել մարդածին ազդեցությունների բացասական հետևանքները:

- ՄԱԶԾ «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը Հյուսիս-արևելյան Հայաստանի լեռնային լանդշաֆտներում» ծրագիր, որի աջակցությամբ 2018 թվականի աշնանն իրականացվել են բնական վերաճի օժանդակման աշխատանքներ՝ հողի հանքայնացման միջոցով՝ 1382 հա տարածքում, որից 391,8 հեկտարը ցանքսի միջոցով հարթակներում (իրականացման համար մթերվել և օգտագործվել է 1954 կգ հաճարենու սերմ): Լոռու և Տավուշի մարզերի 11 անտառտնտեսությունների և 9 հատուկ պահպանվող տարածքների անտառտնտեսության կառավարման պլանների վերանայում, 2016-2020: 3,953,188 ԱՄՆ դոլար

- ԵՄ «Ջրային նախաձեռնություն» (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ուկրաինա, Բելառուս, Մոլդովա) տարածաշրջանային ծրագիր, 2016-2020թթ. 24.8 մլն եվրո 6 երկրի համար: Ծրագրի մասնակից երկրներում ջրային ռեսուրսների կառավարման բարելավում, ներառյալ ջրային ոլորտի ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումներ՝ ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվի և ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման սկզբունքների կիրառմամբ:

- «Համայնքային այգու հիմնում ավանդական մշակաբույսերի և էկոտեխնոլոգիաների ներդրման միջոցով՝ որպես ոչ մետաղական հանքավայրերի այլընտրանք» ծրագիր: "ECO CONSULT" բնապահպանական ՀԿ, 69,180.00 ԱՄՆ դոլար: ԳԷՀ/ՓԴԾ:

- «ClimaEast Plus» ծրագիր: Արոտավայրերի կայուն կառավարման փորձի ներդրում Գեղարքունիքի մարզի լեռնային բնակավայրերում: ԳԷՀ/ՓԴԾ, "Ecological Agriculture" ՀԿ, 308768 ԱՄՆ դոլար:

- «Հողօգտագործման կառավարման և ավելի կայուն էներգիայի արտադրության խթանում Հարավային Կովկասում, Բնական ռեսուրսների կառավարում և

Էկոհամակարգային ծառայությունների պահպանում Հարավային Կովկասում գյուղական կայուն զարգացման համար (ECOserve)»: Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարություն (BMZ), գործընկեր նախարարություններ՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, Շրջակա միջավայրի և Էկոնոմիկայի նախարարություններ:

20.810.870 մլն եվրո, համաֆինանսավորում 4 մլն եվրո EU4Sevan:

Հայաստանում անապատացման դեմ պայքարի 2015-2020 թվականների գործողությունների ազգային ծրագրի շրջանակում իրականացված որոշ քայլեր

Ազգային ժողովը 2018թ. ընդունեց Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենքը (Հոդված 6.1.), ինչպես նաև ՏԻՄ և Երևան քաղաքի տեղական ինքնակառավարման մասին օրենքներում լրացում կատարելու մասին օրենքները:

Հոդված 6.1.-ով սահմանվել է ցամաքային տարածքի ծածկույթ հասկացությունը՝ որը երկրի մակերևույթի դիտարկելի կենսաֆիզիկական ծածկույթն է:

Բացի այդ, ցամաքային տարածքի ծածկույթը բաժանվել է 6 դասի՝

- 1) մշակովի հողեր,
- 2) մարգագետիններ,
- 3) ծառածածկ տարածքներ,
- 4) թփուտապատ տարածքներ,
- 5) ջրածածկ տարածքներ,
- 6) բուսականությունից զուրկ տարածքներ:

Օրենքով սահմանված է, որ ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2019 թվականի ապրիլի 11-ի N 431-Ն որոշմամբ հաստատեց Հայաստանի Հանրապետության ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգման կարգը, որի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարի ամփոփված և վերլուծված տվյալների հիման վրա ընդունում է «Հայաստանի Հանրապետության ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում: Որոշմամբ հաստատվել են նաև տարբեր մակարդակներում՝ համայնք-մարզ-հանրապետություն ցամաքային տարածքի ծածկույթի տարեկան տվյալների հավաքագրման, պահպանման ձևաչափերը:

Հավելենք, որ 2015 թվականից ի վեր, իրականացվում են նաև օրենսդրական բարեփոխումներ՝ ուղղված հողերի մոնիթորինգի համակարգի արդյունավետության բարձրացմանը:

Կառավարության հաստատմանն է ներկայացված նաև «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի ջրահեռացման ոլորտի զարգացման հայեցակարգը»՝ մշակված «Ջինջ» ՍՊԸ-ի կողմից (EU4Sevan Ծրագիր): Այն, ի թիվս այլ էական նշանակություն ունեցող քայլերի, մատնանշում է նաև առաջարկվող լուծումների և առաջարկությունների հաջորդականությունը, որոնք կբարելավեն ոլորտում առկա իրավիճակը: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ ՀՀ վարչապետի մոտ ջրային ոլորտի ռազմավարության վերաբերյալ կայացած խորհրդակցության արձանագրության 3.1 կետի համաձայն՝ Ջրային կոմիտեն սահմանված կարգով շրջանառության մեջ է դրել «Հայաստանի Հանրապետության ռոռզման համակարգի արդյունավետ կառավարման և կայուն զարգացման հայեցակարգը հաստատելու մասին», «Կեղտաջրերի հեռացման բնագավառի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» և «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի՝ 2023-2031 թվականների ռազմավարությունը և ֆինանսավորման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը:

Ռիո+20-ի ավարտական զեկույց և ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի կողմից 2015 թվականի սեպտեմբերին ընդունված կայուն զարգացման նպատակներ

Ռիո+20-ի (2012թ.) ավարտական զեկույցում նշված է, որ անապատացումը, հողի դեգրադացիան և երաշտը գլոբալ խնդիրներ են, որոնց լուծումը **հողերի դեգրադացիայի չեզոքացման վիճակին հասնելն է՝** ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացման միջոցով:

ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի կողմից 2015 թվականի սեպտեմբերին ընդունված կայուն զարգացման նպատակ 15-ում ամրագրված է. «...ցամաքային էկոհամակարգերի պահպանություն, վերականգնում և կայուն օգտագործման խթանում, անտառների կայուն կառավարում, պայքար անապատացման դեմ, հողերի դեգրադացիայի գործընթացի դադարեցում ու հետջրջում և կենսաբազմազանության կորստի դադարեցում», որի թիրախ **15.3-ում** ամրագրված է. «...մինչև 2030 թվականը անապատացման դեմ պայքար և դեգրադացված հողերի վերականգնում, այդ թվում՝ անապատացման, երաշտների և ջրհեղեղների հետևանքով վնասված հողերի՝ ձգտելով աշխարհում հասնել **հողերի դեգրադացիայի չեզոքացման վիճակին**»:

Ըստ Միավորված ազգերի կազմակերպության «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի Կողմերի Կոնֆերանսի 3/COP.12 որոշման «**Հողերի դեգրադացիայի չեզոքացումը**» վիճակ է, երբ հողային ռեսուրսների որակը և քանակը, ինչն անհրաժեշտ է էկոհամակարգային ֆունկցիաների, ծառայությունների և պարենային անվտանգության ապահովմանն ու բարձրացմանը, մնում են անփոփոխ, կամ բարելավվում/ընդլայնվում ըստ կոնկրետ սահմանված ժամանակային և տարածական մասշտաբների ու էկոհամակարգերի»:

Համաձայն ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի կողմերի կոնֆերանսի 22/COP.11 որոշման «**ցամաքային տարածքի ծածկույթի փոփոխման միտումը**» առաջընթացի ցուցանիշ է:

ՀՀ օրենքը ՀՀ ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին: Ընդունված 2022թ. հուլիսի 7-ին:

Հողված 1. 2002 թվականի հունիսի 4-ի Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածը՝

• «հասարակական շահ» հասկացությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հասկացություններով.

ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիություն՝ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների այնպիսի կազմակերպում, որը կապահովի հավասար հասանելիություն ջրօգտագործողներին, այդ թվում՝ այդ ծառայությունների հավասար հասանելիության ապահովման տեսանկյունից խոցելի և մեկուսացված խմբերում ներառված անձանց համար.

ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման տեսանկյունից մեկուսացված և խոցելի խմբեր՝ այն խմբերը, որոնք ընդգրկում են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման իրենց իրավունքներն իրացնելիս դժվարություններ կրող ֆիզիկական անձանց».

Հողված 7. Օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 16-րդ կետով.

«16) ջրամատակարարմանը և ջրահեռացմանը ներկայացվող ներկա ու ապագա պահանջարկի բավարարմանը և ջրամատակարարման ու ջրահեռացման հավասար հասանելիության ապահովմանն ուղղված միջոցառումները»:

Հողված 34. Օրենսգրքի 77-րդ հոդվածի 3-րդ մասը «հասարակական» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման տեսանկյունից մեկուսացված և խոցելի խմբերի» բառերով:

Հոդված 36. Օրենսգրքի 92-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«Հայաստանի Հանրապետության տարածքում տարբեր ինտենսիվության երաշտային պայմանների հաշվարկման ցուցանիշները և մեթոդաբանությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Հոդված 15. Օրենսգրքի 30.2-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետը «ապահովումը» բառից հետո լրացնել «, եթե սույն օրենսգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված միջոցառումները բավարար չեն սակավաջրության կամ երաշտի հետևանքները մեղմելու համար» բառերով, իսկ 2-րդ կետը «ջրի որակական» բառերից հետո՝ «և քանակական» բառերով.

Հոդված 40. 13) Հայաստանի Հանրապետության տարածքում տարբեր ինտենսիվության երաշտային պայմանների հաշվարկման ցուցանիշները և մեթոդաբանությունը սահմանում է կառավարությունը մեկ տարվա ընթացքում.

3.1. Աշխատանքների իրականացման մեթոդաբանություն

Աշխատանքների իրականացման մեթոդաբանությունը ներառում է նախատեսվող քննարկումների իրականացման օրակարգը, ձևաչափը, մասնակիցների ցուցակը և ժամանակացույցը, շահակիր կողմերի ցանկը, նրանց ներգրավման և մասնակցության ձևերն ու միջոցները:

Հայաստանում ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի իրականացման մասին 8-րդ Ազգային զեկույցը կպատրաստվի «PRAIS-4» հարթակում տեղադրված 1-Glossary_RU_0, 2-Manual_RU_0, 3-DD_Guidance_EN_1, 4-GPG_15.3.1_EN և այլ փաստաթղթերում ներկայացված ձևաչափերով և կտեղադրվի «online» ռեժիմով «PRAIS-4» հարթակի միջոցով:

Ընդ որում հատուկ ուշադրություն կդարձվի այն ցուցանիշների կիրառման վրա, որոնք ընդունվել են ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի Կողմ երկրների Կողմերի նախորդ ազգային հաշվետվությունից հետո անցկացված կոնֆերանսների ժամանակ ընդունված որոշումներով:

Տվյալների վերլուծության գործիքներ.

Համաձայն 11/COP.14 որոշման՝ Conservation International-ը հետազայում ուժեղացրել և ընդլայնել է Trends.Earth-ը՝ աջակցելու UNCCD-ի ազգային հաշվետվության համար տվյալների պատրաստմանը և վերլուծությանը այն ձևաչափով, որը կարող է ինքնաբերաբար փոխանցվել PRAIS հարթակ:

Trends.Earth-ը հողի փոփոխության ցուցանիշների մոնիթորինգի համար անվճար և բաց գաղտնաբառով գործիք է: Մասնավորապես, Trends.Earth-ում հասանելի են.

- SO 1 ցուցանիշների, ներառյալ ԿԶՆ ցուցիչ 15.3.1-ի հաշվարկը, համաձայն լավագույն պրակտիկայի ուղեցույցի 2-րդ տարբերակի՝ ԿԶՆ 15.3.1 ցուցիչին հասնելու համար:

- ԿԶՆ 15.3.1 ցուցիչի վերահաշվարկ՝ հաշվի առնելով գրանցված կեղծ դրական և կեղծ բացասական դեգրադացման գործընթացները:

- SO 2-3 ցուցիչի հաշվարկ՝ հողերի դեգրադացիայից տուժած բնակչության համամասնության միտումներն ըստ սեռի:

- SO 3 ցուցիչի հաշվարկը՝ համաձայն ՄԱԿ-ի ՃՇՇ ռազմավարական նպատակ 3-ի շրջանակներում Ազգային հաշվետվության լավագույն փորձի ուղեցույցի:

Մուտք տվյալների գլոբալ աղբյուրներ՝ ներառյալ ազգային հաշվետվության համար ենթադրյալ տվյալների աղբյուրները: Բոլոր Կողմ երկրներին PRAIS4 հարթակի միջոցով տրամադրվում են ենթադրյալ տվյալներ (default data): Այն երկրները, որոնք ունեն տիեզերական պատկերներից ստացված տեղեկատվություն և տվյալներ, կարող են այն ներբեռնել PRAIS4 հարթակում, իսկ եթե չունեն, ապա օգտվում են PRAIS4 հարթակի միջոցով տրամադրված ենթադրյալ տվյալներից:

Ազգային կամ տեղական հասանելի տվյալների և ազգային որոշված ենթադրությունների ինտեգրում, տվյալների փոխանցում PRAIS հարթակին:

Ազգային հաշվետվությունների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու համար և համաձայն 22/COP.11 որոշմամբ սահմանված ընթացակարգի՝ PRAIS 4 ձևաթղթերը նախապես համալրվել են ազգային ենթադրյալ գնահատականներով՝ հիմնված տվյալների առկա համաշխարհային աղբյուրների վրա:

PRAIS-ում տվյալներ, մասնավորապես տարածական և հարակից հատկանիշի տվյալները վերբեռնելիս, Կողմերից երկրին կառաջարկվի ընտրել՝ (i) օգտագործել առաջարկվող ընդհանուր ստեղծագործական լիցենզիան. կամ (ii) օգտագործել գոյություն ունեցող սեփականության լիցենզիան:

Հետազոտությունների իրականացման համար օգտագործվելու է «SMART» (կառավարման մեջ արդյունավետ նպատակներ դնելու տեխնիկա՝ specific-(կոնկրետ), measurable (չափելի), attainable (հասանելի), relevant (համապատասխան) և time-bound (ժամանակի մեջ սահմանափակ) համակարգով հաստատված մեթոդաբանությունը, որի քայլերն են՝

- մեթոդաբանության որոշում և գնահատում,
- ցուցանիշների վերլուծություն և համախմբում,
- ելակետային տվյալների և նպատակային ցուցանիշների սահմանում,
- Կոնվենցիայի շրջանակներում օգտագործվող արդյունավետության ցուցանիշների ներդաշնակեցում այլ ցուցանիշների հետ:

Օգտագործվող ցուցանիշները պետք է լինեն հստակ, չափելի, հասանելի, արդիական, տնտեսապես արդյունավետ:

Ազգային զեկույցների կազմման ընթացքում ԿՏԲԿ թիմն օգտվել է նաև քարտուղարության կողմից իրականացվող աջակցության առցանց հանդիպումներից և դրանց ձայնա և տեսագրություններից:

Ազգային զեկույցի մշակման մեթոդաբանությունը հիմնված է Կոնվենցիայի հիմնական դրույթների վրա՝ Կողմերի Կոնֆերանսի, Գիտության և տեխնոլոգիայի կոմիտեի, Կոնվենցիայի իրականացումն ուսումնասիրող կոմիտեի նստաշրջանների, մասնավորապես 3/COP.8, 7/COP.13, 11/COP.14, 11/COP.15 որոշումներին համապատասխան:

Տեխնիկական առաջադրանքով նախատեսված աշխատանքների հիմնական մեթոդներ կհանդիսանան համապատասխան տեղեկատվության ուսումնասիրությունները, ԱՏՀ-քարտեզների վերլուծությունները, շահակիր կողմերի հետ քննարկումները, շահակիր կողմերի հետ տեղեկատվության հանրայնացման նպատակով կազմակերպվող հանդիպումները:

3.2. Շահակիր խմբերի մասնակցության մեթոդները

Շահակիր խմբերի ներգրավման մեթոդաբանությունը հիմնական գործիքն է ծրագրի թափանցիկության և տարբեր խմբերի մասնակցության ապահովման համար, ինչպես նաև պարտադիր նախապայման՝ վերջիններիս կարծիքներն ազգային փաստաթղթերում ներառելու համար:

Կարևորագույն խնդիրը, որը պետք է հաշվի առնել այս փուլում, շահակիր կողմերի այնպիսի մասնակցության ապահովումն է, որը նրանց կդարձնի ծրագրի դաշնակիցը և կնպաստի կարծիքների փոխանակման և բախման հանրայնացման գործընթացին:

Այդ նպատակներին հասնելու ճանապարհին առաջնայինը տարբեր շահակիր կողմերի մասնակցության ապահովումն է: Այն շահակիր կողմերի, որոնք ներգրավված կլինեն գործընթացի յուրաքանչյուր քայլում՝ որպես գործընկեր: Անհրաժեշտ կլինի ապահովել նրանց իրազեկվածության մակարդակը՝ հնարավորություն տալով այդ խմբերին մեկնաբանել և լսելի դարձնել նրանց կարծիքը: Մասնակցության մակարդակները պետք է լինեն նվազագույնը շահակիր կողմերին իրազեկելը և առավելագույնը՝ մասնակից դարձնելը նրանց վերջնական որոշումներ կայացնելու գործընթացին: Հանդիպումների ընթացքում, ըստ անհրաժեշտության հարցաթերթիկների լրացման օգնությամբ, վեր կհանվեն առկա խնդիրները, խոշոր հողատերերի հետ հողերի չօգտագործման պատճառները:

Այս նպատակներին հասնելու համար կարևոր է.

- շահակիր կողմերին տեղեկացված պահելը, նրանց հավաքագրումը և հետադարձ կապի ապահովումը, ընտրելով կապ հաստատելու մեթոդներ,
- տարբեր կառույցներում ընտրել համագործակցության ապահովման համար կոնտակտային անձ և այս կերպ ապահովել փոխադարձ կապը,
- առկա փաստաթղթերի քննարկումների ընթացքում ապահովել բոլոր շահակիր կողմերի մասնակցությունը,
- հրավիրել հիմնական և աջակցող սեմինարներին և հանդիպումներին, ապահովել տեղեկատվության փոխանակումը՝ կարծիքների փոխանակում,
- տեղեկատվություն տեղադրել ԿՏԲԿ ֆեյսբուքյան կայքէջում, օգտվելով նաև համացանցային այլ ձևաչափերից՝ սոցիալական լրատվամիջոցներ և տեղեկագրեր,
- գործընթացի շուրջ թարմացումներ ուղարկել էլեկտրոնային փոստով:

Շահակիր կողմերին կներկայացվեն տվյալների հավաքագրման եղանակները երկրատեղեկատվական համակարգերի միջոցով, ինչպես նաև նրանց փաստացի վերլուծական հնարավորությունները: Այս ամենը կիրականացվի շահակիր կողմերի համար կազմակերպած դասընթաց/համաժողովի ժամանակ:

Բնապահպանական ոլորտում առկա իրավիճակի վերլուծություն (գործող իրավական ակտերի քանակական և որակական վերլուծություն, դրանց ընդունման տրամաբանությունը, ռազմավարությունը, ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականության սկզբունքներն ու մոտեցումները, հիմնական չափանիշները և այլն):

Բնապահպանական, սոցիալական, տնտեսական ոլորտում առկա տեղեկատվության համեմատական վերլուծությունը, հիշյալ գործունեության արդյունավետության և առաջընթացի ցուցանիշները:

Զեկույցի կազմման ընթացքում անհրաժեշտ խորհրդատվություններն իրականացվելու են համատեղ փորձագետների հետ՝ պայմանագրային հիմունքներով, տեխնիկական առաջադրանքով սահմանված պահանջներին համապատասխան:

Տեխնիկական առաջադրանքով նախատեսված գործողությունների իրականացման շահակիր կողմեր կարող են հանդիսանալ Պետական կառավարման մարմինները (ՀՀ շրջակա միջավայրի, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Արդարադատության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Առողջապահության, Էկոնոմիկայի, Արտակարգ իրավիճակների, Ֆինանսների նախարարությունները, Կադաստրի կոմիտե, ՀՀ վիճակագրական կոմիտե, մարզպետարանները):

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունը դեպի ծով ելք չունեցող երկիր է կովկասյան տարածաշրջանում: Պետական սահման ունի Հյուսիսում՝ Վրաստանի, Արևելքում՝ Ադրբեջանի, Արևմուտքում և հարավ-արևմուտքում՝ Թուրքիայի, Հարավում՝ Իրանի հետ: Հայաստանի բնակչությունը 2019թ դրությամբ 2,95 միլիոն մարդ է (2020 թ.), իսկ նրա ՀՆԱ-ն կազմում է 13,6 միլիարդ դոլար:

Երկրի բնակչության մեկ երրորդն ապրում է մայրաքաղաք Երևանում:

Հայաստանի Հանրապետության տարածքը 29743կմ² է: Միջին բարձրությունը ծովի մակերևույթից 1800մ է (երկրի տարածքի 76.5%-ը գտնվում է ծովի մակերևույթից 1000-2500 մ բարձրության վրա):

Ցամաքի ամենացածր կետը Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանն է՝ 375 մ, իսկ ամենաբարձր կետը Արագած լեռան գագաթն է՝ 4090 մ:

Ցամաքի ընդհանուր մակերես, ջրային օբյեկտների մակերես և երկրի ընդհանուր մակերես՝ ըստ տարիների (կմ²)

Աղյուսակ 4.

Տարի	Ցամաքի ընդհանուր մակերես (կմ ²)	Ջրային օբյեկտներ (կմ ²)	Երկրի ընդհանուր մակերես (կմ ²)
2000	28 463	1315	29 778
2001	28 462	1316	29 778
2005	28 458	1320	29 778
2010	28 458	1320	29 778
2015	28 458	1320	29 778
2019	28 458	1320	29 778

Հիմնական փոփոխությունները 2000-2005թթ. պայմանավորված են Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ:

Հայաստանի տնտեսությունը դիմակայություն է ցուցաբերել վերջին ցնցումներին՝ հիմնականում շնորհիվ ինտելեկտուալ մակրոտնտեսական կառավարման՝ ճկուն փոխարժեքի, գնաճի թիրախավորման ակտիվ ռեժիմի, արդյունավետ հարկաբյուջետային կանոնների և առողջ ֆինանսական հատվածի: Թեև 2022 թվականին տնտեսությունն ավելի լավ է գործել, քան ակնկալվում էր, սակայն աշխարհաքաղաքական մարտահրավերները շարունակում են ազդել Հայաստանի միջնաժամկետ աճի հեռանկարների վրա:

1991թ.-ին անկախությունից կարճ ժամանակ անց, Հայաստանը դարձավ Համաշխարհային բանկի անդամ: Այդ ժամանակից ի վեր, ավելի քան երեք տասնամյակ Հայաստանը նկատելի տնտեսական ցուցանիշներ է գրանցել և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի յոթ անգամ աճ է գրանցել:

Չնայած այս բազմաթիվ ձեռքբերումներին, Հայաստանի տնտեսությունը շարունակում է դիմակայել կառուցվածքային մարտահրավերներին, ինչպիսիք են՝ բիզնեսի և ներդրումային միջավայրի հետագա բարելավման անհրաժեշտությունը, համեմատաբար բարձր գործազրկությունը, աշխատանքային հմտությունների անհամապատասխանությունը և ընկերությունների թույլ մրցունակությունը:

2016 թվականին սպասարկման ոլորտը կազմում էր աշխատուժի 48.8%-ը: Գյուղատնտեսությունը շարունակում է մնալ աշխատուժ ունեցող հիմնական գործատուն, շուկայական մասնաբաժինը կազմում է 35,3%: Պահպանվում է գործազրկության համեմատաբար բարձր մակարդակ (18%), նաև՝ արտագաղթի մակարդակը:

ՀՆԱ-ն ավելի քիչ հավասարաչափ է բաշխվում, քան զբաղվածությունը, ընդ որում մոտ 55%-ը ծագում է ծառայությունների ոլորտում և միայն 17%-ը գյուղատնտեսության: Աղքատությունը պահպանվում է՝ ազդելով բնակչության շուրջ 29%-ի վրա՝ հիմնված աղքատության ազգային գծի վրա:

5. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ ՏԱՄՆԱՄՅԱ (2018-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ) ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

PRAIS4 (Performance Review and Implementation System, Система обзора результативности и оценки осуществления КБО ООН, Կոնվենցիայի արդյունավետության ակնարկի և իրականացման գնահատման համակարգ) հարթակում Ռազմավարական նպատակ 1-ի հետ կապված տեղեկատվությունը և տվյալները ստացվում են միայն տիեզերական պատկերների տվյալների հիման վրա:

5.1. Ռազմավարական նպատակ 1 (SO1)

Բարելավել ազդակիր էկոհամակարգերի վիճակը, պայքարել անապատացման/հողերի դեգրադացիայի դեմ, աջակցել հողերի կայուն կառավարմանը և նպաստել հողերի դեգրադացիայի չեզոքացմանը:

Ռազմավարական նպատակ SO1-ի (PRAIS4 հարթակում հաշվետվության համար) օգտագործվող առաջընթացի ցուցանիշներն են.

- SO1-1 ցամաքային տարածքի ծածկույթի վիճակը բնութագրող միտումները,

- SO1-2 հողի արտադրողականությունը կամ հողի ֆունկցիոնալությունը բնութագրող միտումները,

- SO1-3 հողի ստորգետնյա և վերգետնյա հատվածներում օրգանական ածխածնի քանակի փոփոխման միտումները:

SO1-ի բաժնում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության սահմանների, օգտագործվել են տրամադրվող ենթադրյալ տվյալներ:

SO1-1 ցամաքային տարածքի ծածկույթի փոփոխությունները բնութագրող միտումները

SO1-1 առաջընթացի ցուցանիշով պահանջվում է գնահատել Երկրի ընդհանուր տարածքը, ցամաքի ընդհանուր մակերեսը և ջրածածկ տարածքների ընդհանուր մակերեսը՝ ըստ համապատասխան տարիների (կմ²):

Ըստ PRAIS 4-ի ենթադրյալ տվյալների՝ Հայաստանի Հանրապետության տարածքը կազմել է 29716կմ²: Այն հնարավոր չէ հիմք ընդունել, քանի որ համաձայն ՀՀ «Հաստատել Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռն ըստ կատեգորիաների և հողատեսքերի՝ 1997 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաստատելու մասին» օրենքի (7 հոկտեմբերի 1998թ., ՀՕ-249)՝ Հայաստանի Հանրապետության տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 29743կմ², ինչը օգտագործվում է բոլոր պաշտոնական փաստաթղթերում: Այս փաստի հիման վրա Հայաստանի Հանրապետության սահմանների քարտեզը՝ 29743 կմ² տարածքով, բեռնվել է PRAIS 4-ում (աղբյուրը՝ «Յակոբեան բնապահպանական կենտրոն» (Հայաստանի ամերիկյան համալսարան): Հայաստանի Հանրապետության սահմանը ներբեռնելուց հետո, գործարկվեց QGIS-ի ալգորիթմների հաջորդականությունը TREND ERTS գործիքով: Հաշվարկները կատարվել են տարբեր աղբյուրների տվյալների հիման վրա: Արդյունքում, TREND ERTS-ի սկզբնաղբյուրից ընտրվել է համեմատաբար ընդունելի տարբերակ, որը տեղադրվել է PRAIS4-ում: Սակայն պարզվեց, որ 29743կմ² սահմաններով տարածքի քարտեզը PRAIS4-ում մուտքագրելուց հետո, Հայաստանի տարածքը կազմել է 29778 կմ²: Չնայած այդ հանգամանքին, այն հիմք է ընդունվել հետագա հաշվարկների համար:

5.1.1.SO1-1 ցամաքային տարածքի ծածկույթի վիճակը բնութագրող միտումները

Ըստ ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի Prais 4 հարթակի ցամաքային տարածքի ծածկույթը դասակարգվում է 7 դասի.

- Ծառածածկ տարածքներ,
- Մարգագետիններ,
- Մշակովի հողատարածքներ,

- Ջրաճահճային հողատարածքներ,
- Արհեստական ծածկույթներ,
- Այլ հողեր,
- Ջրածածկ տարածքներ:

Ստորև ներկայացված է Հայաստանում կոնվենցիայի ցամաքային տարածքի ծածկույթի այլ դասերի անցումների լրացված մատրիցան:

Հայաստանում կոնվենցիայի ցամաքային տարածքի ծածկույթի այլ դասերի անցումների մատրիցա

Աղյուսակ 5.

Սկզբնական/ վերջնական	Ծառածածկ տարածքներ	Մարգագե- տիններ	Մշակովի հողատա- րածքներ	Ջրաճահ- ճային հողատա- րածքներ	Արհեստական ծածկույթներ	Այլ հողեր	Ջրածածկ տարածքներ
Ծառածածկ տարածքներ	0	-	-	0	-	0	-
Մարգագետիններ	+	0	+	0	-	-	-
Մշակովի հողատարածքներ	+	-	0	0	-	0	-
Ջրաճահճային հողատարածքներ	0	0	0	0	0	0	-
Արհեստական ծածկույթներ	0	0	0	0	0	0	0
Այլ հողեր	0	+	+	0	-	0	0
Ջրածածկ տարածքներ	0	0	+	0	0	0	0

Հայաստանում կոնվենցիայի ցամաքային տարածքի ծածկույթի այլ դասերի անցումները ներկայացված են ըստ գույների.

- հողերի դեգրադացիա՝ կարմիր (նշան -),
- հողերի բարելավում՝ կանաչ (նշան +),
- հողերի կայուն վիճակ՝ դեղին (նշան 0):

Բազային և հաշվետու ժամանակաշրջանում կոնվենցիայի ցամաքային տարածքի ծածկույթի դասերի բաշխվածությունը (կմ²)



Աղյուսակ 6.

Տարե-թիվ	Ծառածածկ տարածքներ (կմ ²)	Մարգագետիններ (կմ ²)	Մշակովի հողատարածքներ (կմ ²)	Ջրաճահճային հողատարածքներ (կմ ²)	Արհեստական ծածկույթներ (կմ ²)	Այլ հողեր (կմ ²)	Ջրածածկ տարածքներ (կմ ²)
2000	6 020	4 502	17 061	13	435	432	1 315

2001	6 011	4 493	17 074	13	448		423	1 316
2002	6 012	4 526	17 030	12	464		416	1 319
2003	6 012	4 530	17 016	11	475		413	1 321
2004	6 012	4 527	17 013	11	485		410	1 320
2005	6 018	4 513	17 006	11	506		405	1 320
2006	6 017	4 497	17 014	11	517		402	1 320
2007	6 024	4 491	17 004	11	528		399	1 321
2008	6 030	4 476	17 007	11	537		397	1 321
2009	6 029	4 476	16 998	11	549		395	1 321
2010	6 025	4 477	16 994	11	559		392	1 321
2011	6 025	4 476	16 984	11	571		390	1 321
2012	6 021	4 454	16 998	11	585		389	1 320
2013	6 028	4 453	16 977	11	601		388	1 320
2014	6 029	4 452	16 942	11	638		385	1 320
2015	6 029	4 452	16 927	11	656		383	1 320
2016	6 252	4 419	16 737	11	656		383	1 320
2017	6 289	4 412	16 691	11	684		370	1 320
2018	6 332	4 401	16 655	11	692		366	1 320
2019	6 374	4 380	16 634	11	692		366	1 320
2020	0	0	0	0	0		0	0


Բազային և հաշվետու ժամանակաշրջանում կոնվենցիայի ցամաքային տարածքի ծածկույթի դասերի բաշխվածությունը (կմ²)

Գծապատկեր 1.




2015 և 2019թթ-ի կոնվենցիայի ցամաքային տարածքի ծածկույթի դասերի բաշխվածությունը (%)

Գծապատկեր 2.




- Ծառածածկ տարածքներ (կմ2)
- Մարգագետիններ (կմ2)
- Աշակովի հողատարածքներ (կմ2)
- Ձրաճահճային հողատարածքներ (կմ2)
- Արհեստական ծածկույթներ (կմ2)
- Սյլ հողեր (կմ2)
- Ձրածածկ տարածքներ (կմ2)



- Ծառածածկ տարածքներ (կմ2)
- Մարգագետիններ (կմ2)
- Աշակովի հողատարածքներ (կմ2)
- Ձրաճահճային հողատարածքներ (կմ2)
- Արհեստական ծածկույթներ (կմ2)
- Սյլ հողեր (կմ2)
- Ձրածածկ տարածքներ (կմ2)

Կոնվենցիայի ցամաքային տարածքի ծածկույթի դասերի բաշխվածության համեմատությունը 2015 և 2019 թվականներին (կմ²)

Գծապատկեր 3.



Բազային ժամանակաշրջանում կոնվենցիայի ցամաքային տարածքի ծածկույթի դասերի փոփոխությունները (կմ²)

Աղյուսակ 7

Սկզբնական/ վերջնական	Ծառածածկ տարածքներ (կմ ²)	Մարգագետիններ (կմ ²)	Մշակովի հողատարածքներ (կմ ²)	Ջրաճահճային հողատարածքներ (կմ ²)	Արհեստական ծածկույթներ (կմ ²)	Այլ հողեր (կմ ²)	Ջրածածկ տարածքներ (կմ ²)	Ընդհանուր (կմ ²)
Ծառածածկ տարածքներ (կմ ²)	5 937	8	59	0	6	0	1	6 011
Մարգագետիններ (կմ ²)	12	4 380	97	0	2	1	1	4 493
Մշակովի հողատարածքներ (կմ ²)	80	63	16 768	0	161	0	1	17 073
Ջրաճահճային հողատարածքներ (կմ ²)	0	0	0	11	0	0	2	13
Արհեստական ծածկույթներ (կմ ²)	0	0	0	0	448	0	0	448
Այլ հողեր (կմ ²)	0	1	2	0	39	0	0	424
Ջրածածկ տարածքներ (կմ ²)	0	0	1	0	0	0	1 314	1 315
Ընդհանուր (կմ ²)	6 029	4 452	16 927	11	656	0	1 319	

Հաշվետու ժամանակաշրջանում կոնվենցիայի ցամաքային տարածքի ծածկույթի դասերի փոփոխությունները (կմ²)

Աղյուսակ 8

Սկզբնական/ վերջնական	Ծառածածկ տարածքներ (կմ ²)	Մարգագե- տիններ (կմ ²)	Մշակովի հողատարածքներ (կմ ²)	Զրահա- ճային հողատա- րածքներ (կմ ²)	Արհեստական ծածկույթներ (կմ ²)	Այլ հողեր (կմ ²)	Զրածածկ տարածքներ (կմ ²)	Ընդհանուր (կմ ²)
Ծառածածկ տարածքներ (կմ ²)	6 026	0	1	0	1	0	0	6 028
Մարգագետիննե- ր (կմ ²)	57	4 376	19	0	1	0	0	4 453
Մշակովի հողատարածք- ներ (կմ ²)	292	4	16 613	0	17	0	0	16 926
Զրահահճային հողատարածքներ (կմ ²)	0	0	0	11	0	0	0	11
Արհեստական ծածկույթներ (կմ ²)	0	0	0	0	656	0	0	656
Այլ հողեր (կմ ²)	0	0	0	0	17	365	0	382
Զրածածկ տարածքներ (կմ ²)	0	0	0	0	0	0	1 320	1 320
Ընդհանուր (կմ ²)	6 375	4 380	16 633	11	692	365	1 320	

Ցամաքային տարածքի ծածկույթի դեգրադացիան

Ըստ PRAIS 4-ի ենթադրյալ տվյալների՝ ցամաքային տարածքի ծածկույթի դեգրադացված, կայուն և բարելավված տարածքների չափերը բերված են ստորև ներկայացված աղյուսակներում:

Աղյուսակ 9

Բազային ժամանակաշրջանում ցամաքային տարածքի ծածկույթի դեգրադացիա (կմ²)

	Տարածք (կմ ²)	Տարածքի տոկոսը ընդհանուրի նկատմամբ (%)
Դեգրադացված ցամաքային տարածքի ծածկույթով հողեր	383	1.3
Կայուն ցամաքային տարածքի ծածկույթով հողեր	29 394	98.7

Բազային ժամանակաշրջանում Կոնվենցիայի ցամաքային տարածքի ծածկույթի դասերի առավել բացասական փոփոխությունները գրանցել են Կոնվենցիայի «մշակովի հողատարածքներ»-ի և «այլ հողատարածքներ»-ի տեղափոխմամբ «արհեստական ծածկույթներ» դասի (161կմ² և 39կմ²), «ծառածածկ տարածքներ»-ի և «մշակովի հողատարածքներ»-ի տեղափոխմամբ՝ համապատասխանաբար «մշակովի հողատարածքներ» և «մարգագետիններ» դասի (59կմ² և 63 կմ²): Սակայն կան նաև դրական փոփոխություններ, որոնցից առավել դրականները գրանցել են Կոնվենցիայի «մարգագետիններ»-ի դասից տեղափոխմամբ Կոնվենցիայի «ծառածածկ

տարածքներ» և «մշակովի հողեր» դասի (համապատասխանաբար 12կմ² և 97կմ²), և Կոնվենցիայի «մշակովի հողեր» -ի տեղափոխմամբ «ծառածածկ տարածքներ» դասի (80կմ²):

Հաշվետու ժամանակաշրջանում ցամաքային տարածքի ծածկույթի դեգրադացիան
(կմ²)


Աղյուսակ 10

	Տարածք (կմ ²)	Տարածքի տոկոսը ընդհանուրի նկատմամբ (%)
Բարելավված ցամաքային տարածքի ծածկույթով հողեր	367	1.2
Կայուն ցամաքային տարածքի ծածկույթով հողեր	29 369	98.6
Դեգրադացված ցամաքային տարածքի ծածկույթով հողեր	41	0.1

Հաշվետու ժամանակաշրջանում Կոնվենցիայի ցամաքային տարածքի ծածկույթի առավել բացասական փոփոխությունները գրանցել են Կոնվենցիայի «այլ հողեր» -ի և «մշակովի հողատարածքներ» -ի տեղափոխմամբ «արհեստական ծածկույթներ» դասի (17կմ² և 17կմ²): Իսկ առավել դրական փոփոխություններից կարելի նշել կոնվենցիայի «մարգագետիններ» -ի և «մշակովի հողեր» -ի դասից հողերի տեղափոխումը «ծառածածկ տարածքներ» դասի (համապատասխանաբար 57կմ² և 292կմ²): Ստացված տվյալների հիման վրա կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ հաշվետու ժամանակաշրջանում Կոնվենցիայի ցամաքային տարածքի ծածկույթի դեգրադացիայի տեմպերը բազային ժամանակաշրջանի համեմատ նվազել են ավելի քան 3 անգամ: Ստացված տվյալները բավականին հավաստի են, քանի որ գրեթե նույնը ներկայացված է նաև PRAIS 4 Հայաստան-Խմբագրություն 1, 07/04/2022 05:54-SO1-1 աղբյուրում:

Բազային ժամանակաշրջանում ցամաքային տարածքի ծածկույթի դեգրադացիա (կմ²)


Նկար 1.



Source Data Credits European Space Agency Climate Change Initiative Land Cover (ESA CCI-LC) product, 1992-2019. URL: <https://www.esa-landcover-cci.org/>

Հաշվետու ժամանակաշրջանում ցամաքային տարածքի ծածկույթի դեգրադացիա (կմ²)

Նկար 2.



Source Data Credits: European Space Agency Climate Change Initiative Land Cover (ESA CCI-LC) product, 1992-2019. URL: <https://www.esa-landcover-cci.org/>

5.1.2.SO1-2 Հողի արտադրողականությունը կամ հողի ֆունկցիոնալությունը բնութագրող միտումներ

Հողի արտադրողականությունը հողի կենսաբանական արտադրողական կարողությունն է (սննդի, մանրաթելերի և վառելիքի հիմնական աղբյուրը) մարդկանց կյանքը պահպանելու համար: Դեգրադացված հողերը գնահատելու համար (մասնաբաժինն ընդհանուր տարածքի նկատմամբ) օգտագործվում են հողի արտադրողականության փոփոխությունները՝ որպես հողերի առողջության և արտադրողականության երկարաժամկետ փոփոխությունների ցուցիչ: Հողի արտադրողականությունն արտացոլում է էկոհամակարգերի գործունեության փոփոխությունների զուտ ազդեցությունը բույսերի և կենսազանգվածի աճի վրա: Հողի արտադրողականությունը տարբեր է և միշտ չէ, որ ուղղակիորեն կապված է մեկ միավորի տարածքի գյուղատնտեսական եկամտի հետ: Այն նաև արտացոլում է բույսերի և կենսազանգվածի աճի համար էկոհամակարգի գործառույթների փոփոխությունների հետևանքները: Այլ կերպ ասած, այն որակական համալիր միավոր է, որը բնութագրում է բուսածածկի փոփոխման դրական կամ բացասական միտումների ինտենսիվությունը և կայունությունը:

Ստորև ներկայացված հողի արտադրողականության հետ կապված տվյալները (ենթադրյալ տվյալներ) ներկայացված են PRAIS 4 Հայաստան-Խմբագրություն 1, 07/04/2022 05:54-SO1-2 աղբյուրից:

Բազային ժամանակաշրջանում հողի արտադրողականության դինամիկայի գնահատականները կոնվենցիայի ցամաքային ծածկույթի յուրաքանչյուր դասի համար (կմ²)

Աղյուսակ 11.

Դաս	Հողի զուտ արտադրողականության դինամիկան					
	Նվազում	Չափավոր նվազում	Մտրես	Կայուն	Աճող	Տվյալ չկա
Ծառածածկ տարածքներ	0	12	44	1288	4575	1
Մարգագետիններ	2	3	40	2576	1735	3
Մշակովի հողատարածքներ	3	50	162	4010	12462	1
Ջրաճահճային հողատարածքներ	0	0	1	6	2	1
Արհեստական ծածկույթներ	7	9	22	105	292	0
Այլ հողեր	1	2	11	208	152	2
Ջրածածկ տարածքներ	2	0	31	50	100	1138

Հաշվետու ժամանակաշրջանում հողի արտադրողականության դինամիկայի գնահատականները կոնվենցիայի ցամաքային ծածկույթի յուրաքանչյուր դասի համար (կմ²)


Աղյուսակ 12.

Դաս	Հողի զուտ արտադրողականության դինամիկան					
	Նվազում	Զախավոր նվազում	Ստրես	Կայուն	Աճող	Տվյալ չկա
Ծառածածկ տարածքներ	48	122	329	1286	4180	2
Մարգագետիններ	126	143	495	1910	1671	2
Մշակովի հողատարածքներ	94	550	1776	6001	8042	0
Ջրաձահձային հողատարածքներ	0	1	2	3	4	1
Արհեստական ծածկույթներ	21	34	79	109	263	0
Այլ հողեր	17	8	62	151	119	2
Ջրածածկ տարածքներ	2	6	75	30	72	1141

Տվյալները ցույց են տալիս, որ հաշվետու ժամանակաշրջանում հողի արտադրողականության դինամիկան կոնվենցիայի ցամաքային ծածկույթի գրեթե բոլոր դասերում անկման միտում ունի բազային ժամանակաշրջանի համեմատ: Այս փոփոխությունները պարզաբանելու համար անհրաժեշտ է կատարել համեմատություն տարածաշրջանի այլ երկրների հողի արտադրողականության դինամիկայի միտումների և հետագա զեկույցներից ստացված տվյալների հետ:


Բազային ժամանակաշրջանում հողի արտադրողականության դինամիկայի գնահատականները կոնվենցիայի ցամաքային ծածկույթի յուրաքանչյուր դասի համար (կմ²)

Գծապատկեր 4.



Հաշվետու ժամանակաշրջանում հողի արտադրողականության դինամիկայի գնահատականները կոնվենցիայի ցամաքային ծածկույթի յուրաքանչյուր դասի համար (կմ²)

Գծապատկեր 5.



Հողի արտադրողականության դեգրադացիա

Բազային ժամանակաշրջանում հողի արտադրողականության դեգրադացիայի գնահատում

Աղյուսակ 13.

	Տարածք (կմ ²)	Տոկոսը ընդհանուր տարածքի նկատմամբ (%)
Դեգրադացված արտադրողականությամբ հողեր	5141	18.1
Առանց դեգրադացված արտադրողականության հողեր	23 303	81.9
Հողի արտադրողականության վերաբերյալ տվյալները բացակայում են	17	0.1

Ջրածածկ տարածքները ընդգրկված չեն ընդհանուր տարածքի մեջ:

Հաշվետու ժամանակաշրջանում հողի արտադրողականության դեգրադացիայի գնահատում

Աղյուսակ 14.

	Տարածք (կմ ²)	Տոկոսն ընդհանուր տարածքի նկատմամբ (%)
Բարելավված արտադրողականությամբ հողեր	8393	29.5
Կայուն արտադրողականությամբ հողեր	14 910	52.4
Դեգրադացված արտադրողականությամբ հողեր	5139	18.1
Հողի արտադրողականության վերաբերյալ տվյալները բացակայում են	15	0.1

Ջրածածկ տարածքներն ընդգրկված չեն ընդհանուր տարածքի մեջ:


TREND ERTS գործիքով տարբեր աղբյուրներից ստացված հողի արտադրողականության դեգրադացիայի տվյալները բազային և հաշվետու ժամանակաշրջաններում բավականին տարբեր են (բազային ժամանակաշրջան 18.1%, 0.3%, և հաշվետու ժամանակաշրջան 18.1%, 4.2%): Նշված երկրորդ թվերի արժեքները ներկայացված են Հայաստան-Խմբագրություն 1, 07/04/2022 05:54-SO1-2 աղբյուրից: Տվյալներից կարելի է փաստել, որ հաշվետու ժամանակաշրջանում հողերի արտադրողականության դեգրադացիայի աճի միտում կա բազային ժամանակաշրջանում հողերի արտադրողականության համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում բազային ժամանակաշրջանի համեմատ հողի արտադրողականության նվազումը ամենայն հավանականությամբ, պայմանավորված է կլիմայի փոփոխությամբ, երաշտների հաճախականության ավելացմամբ և ուժեղացմամբ, հրդեհների հաճախականության ավելացմամբ և

հրդեհված տարածքների ընդլայնմամբ 2016-2019 թվականներին և անտառների սանիտարական հատումների ծավալների ընդլայնմամբ: Վիճակագրության համաձայն 2016-2019 թվականներին հրդեհներից տուժել է 5524,9 հա անտառային տարածք: Երաշտների հաճախականության ավելացումը և ուժեղացումը ներկայացված են սույն զեկույցի SO3-1 Աղյուսակ 22-ում:

Հողի արտադրողականության դեգրադացիայի գնահատականը բազային ժամանակաշրջանի համար


Նկար 3.



Source Data Credits: EC-JRC, 2021, based on Xavier Rotllan-Puig, Eva Ivits, Michael Cherlet, LPDyNR: A new tool to calculate the land productivity dynamics indicator, Ecological Indicators, Volume 133, 2021, 108386, ISSN 1470-160X. URL: <https://doi.org/10.1016/j.ecolind.2021.108386>

Հողի արտադրողականության դեգրադացիայի գնահատականը հաշվետու ժամանակաշրջանի համար

Նկար 4.



Source Data Credits: C-JRC, 2021, based on Xavier Rotllan-Puig, Eva Ivits, Michael Cherlet, LPDyNR: A new tool to calculate the land productivity dynamics indicator, Ecological Indicators, Volume 133, 2021, 108386, ISSN 1470-160X. URL: <https://doi.org/10.1016/j.ecolind.2021.108386>

5.1.3. SO1-3 հողի ստորգետնյա և վերգետնյա հատվածներում օրգանական ածխածնի քանակի փոփոխման միտումներ

ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի 22/COP.11 որոշման համաձայն հողում օրգանական ածխածնի պաշարներն ընդունվել են որպես օգտագործվող չափանիշ՝ հաշվի առնելով, որ այդ չափանիշը կփոխարինվի՝ ցամաքային էկոհամակարգում ածխածնի ընդհանուր պաշարների վերաբերյալ տվյալներ ստանալուց հետո: Հողում օրգանական ածխածնի պաշարների չափանիշը գնահատում է հողի մեջ ածխածնի քանակը, և այն հողի օրգանական նյութի հիմնական բաղադրիչն է: Հողում օրգանական ածխածինը մեծապես ազդում է հողի ֆիզիկական, քիմիական, կենսաբանական հատկությունների վրա և կարևոր դեր է խաղում հողի բերրիության ու որակի բարելավման, ջրի պահպանման ունակության, հողի էրոզիայի նվազեցման և բերքատվության բարձրացման գործում: Հողում օրգանական ածխածնի մակարդակը կարող է օգտագործվել որպես օժանդակ պարամետր՝ էկոհամակարգի և հողի առողջությունը գնահատելու համար:

Հոդում (ստորգետնյա հատված՝ 0-30 սմ) օրգանական ածխածնի (OC) պաշարները

Հոդում օրգանական ածխածնի պաշարների քանակը Կոնվենցիայի ցամաքային տարածքի ծածկույթի յուրաքանչյուր դասի համար ըստ տարիների, (տոննա/հեկտար)

Աղյուսակ 15.

Տարի	Հոդում օրգանական ածխածնի պաշարները (տ/հա)						
	Ծառածածկ տարածքներ	Մարգագետիններ	Մշակովի հողատարածքներ	Ջրաճահճային հողատարածքներ	Արհեստական ծածկույթներ	Այլ հողեր	Ջրածածկ տարածքներ
2000	119	134	108	126	68	84	3
2001	119	134	107	126	68	85	3
2002	119	135	107	130	67	85	3
2003	119	135	107	130	67	85	3
2004	119	135	107	130	67	85	3
2005	119	135	107	129	66	86	3
2006	119	135	107	129	66	86	3
2007	119	135	107	129	65	86	3
2008	120	135	107	129	65	86	3
2009	120	135	107	128	65	86	3
2010	120	135	107	128	65	86	3
2011	120	135	107	128	65	86	3
2012	120	135	108	127	64	86	3
2013	120	135	108	127	64	86	3
2014	120	135	108	126	64	86	3
2015	120	135	108	126	64	86	3
2016	119	135	108	126	63	86	3
2017	119	135	108	126	62	87	3
2018	119	135	108	126	61	88	3
2019	119	135	108	126	60	88	3

Համաձայն ներկայացված տվյալների (Աղյուսակ 15.) հաշվետու ժամանակահատվածում Կոնվենցիայի «ծառածածկ տարածքներ» և «արհեստական ծածկույթներ» հողերում տեղի է ունեցել կուտակված օրգանական ածխածնի քանակի նվազում իսկ «մարգագետիններ», «մշակովի հողատարածքներ», «ջրաճահճային հողատարածքներ», «ջրածածկ տարածքներ» հողերում նկատվում է կայուն վիճակ: «Այլ հողեր» -ում հաշվետու ժամանակաշրջանում նկատվում է կուտակված օրգանական ածխածնի քանակի աճ:

«Ծառածածկ տարածքներ» -ում օրգանական ածխածնի քանակի նվազումը կարելի է պայմանավորել հատումների և հրդեհների առկայությամբ, իսկ «արհեստական ծածկույթներ» -ի հողերում՝ կանաչ տարածքների կրճատմամբ:

Ինչ վերաբերում է «մարգագետիններ» -ի և «մշակովի հողատարածքներ» -ի կայուն վիճակին, ապա դա կարելի է բացատրել համապատասխանաբար գերարածեցման նվազեցմամբ, նոր բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծմամբ և դրանց կայուն կառավարմամբ, մշակովի հողատարածքների բարելավմամբ: Այլ հողերում հաշվետու ժամանակաշրջանում կուտակված օրգանական ածխածնի քանակի աճը, ամենայն հավանականությամբ, նույնպես պայմանավորված է գերարածեցման նվազեցմամբ, նոր բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծմամբ և դրանց կայուն կառավարմամբ:




Բազային ժամանակաշրջանում հողում օրգանական ածխածնի պաշարների փոփոխությունը՝ պայմանավորված կոնվենցիայի ցամաքային տարածքի ծածկույթի դասերի վերափոխմամբ

Աղյուսակ 16ա.

Դասի վերափոխում		Բազային ժամանակահատվածում հողում օրգանական ածխածնի փոփոխությունը					
Սկզբում	Վերջում	Տարածքի փոփոխություն (կմ ²)	Սկզբում օրգանական պաշարը (տ/հա)	Վերջում օրգանական պաշարը (տ/հա)	Սկզբում օրգանական պաշարը (տ)	Վերջում օրգանական պաշարը (տ)	ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱԾԽԱԾՆԻ ՊԱՇԱՐԻ ՓՈՓՈԽՈՒՄ (տ)
Մշակովի հողատարածքներ	Մարգագետիններ	63	155.0	180.6	976 291	1 137 927	161 636
Մշակովի հողատարածքներ	Ծառածածկ տարածքներ	80	136.7	151.4	1 093 251	1 211 248	117 997
Մարգագետիններ	Մշակովի հողատարածքներ	97	143.4	131.2	1 390 637	1 272 352	-118 285
Մշակովի հողատարածքներ	Արհեստական ծածկույթներ	161	77.0	56.0	1 239 056	901 978	-337 078

Հոդում օրգանական ածխածնի պաշարների քանակը Կոնվենցիայի ցամաքային տարածքի ծածկույթի յուրաքանչյուր դասի համար ըստ տարիների (տոննա/հեկտար)
Գծապատկեր 6.






2000-2019 թվականների ընթացքում ջրածածկ տարածքներում փոփոխություններ չկան (3 տոննա/հեկտար):

Բազային և հաշվետու ժամանակաշրջանում հողում օրգանական ածխածնի պաշարների քանակը կոնվենցիայի ցամաքային տարածքի ծածկույթի յուրաքանչյուր դասի համար (տոննա/հեկտար)

Գծապատկեր 7.



Հաշվետու ժամանակաշրջանում հողում օրգանական ածխածնի պաշարների փոփոխությունը՝ պայմանավորված կոնվենցիայի ցամաքային տարածքի ծածկույթի դասերի վերափոխմամբ

Աղյուսակ 16բ.

Դասի վերափոխում		Հաշվետու ժամանակաշրջանում հողում օրգանական ածխածնի պաշարների փոփոխությունը					ՕՐ ընդհանուր պաշարի փոփոխություն (տ)
Սկզբում	Վերջում	Տարածքի փոփոխություն (կմ ²)	Սկզբում օՐ պաշարը (տ/հա)	Վերջում օՐ պաշարը (տ/հա)	Սկզբում ընդհանուր պաշարը (տ)	Վերջում ընդհանուր պաշարը (տ)	
Մշակովի հողատարածքներ	Արհեստական ծածկույթներ	17	55.1	47.6	93 689	80 958	-12 731
Մարգագետիններ	Մշակովի հողատարածքներ	19	178.0	175.2	338 289	332 838	-5 451
Մարգագետիններ	Ծառածածկ տարածքներ	57	122.6	122.7	699 045	699 187	570
Մշակովի հողատարածքներ	Ծառածածկ տարածքներ	292	103.1	106.8	3 009 329	3 118 838	108 040

Հողում օրգանական ածխածնի պաշարների դեգրադացիա

Բազային ժամանակաշրջանում հողում օրգանական ածխածնի պաշարների
դեգրադացիա

Աղյուսակ 17.

	Տարածք (կմ ²)	Տոկոսը ընդհանուր տարածքի նկատմամբ (%)
Օրգանական ածխածնի (OC) պաշարներով դեգրադացված հողեր	223	0.8
Օրգանական ածխածնի պաշարներով չդեգրադացված տարածքներ	28 229	99.2
Տարածքներ որտեղ օրգանական ածխածնի պաշարների վերաբերյալ տվյալներ չկան	9	0.0

Ջրածածկ տարածքներն ընդգրկված չեն ընդհանուր տարածքի մեջ:

Հաշվետու ժամանակաշրջանում հողում օրգանական ածխածնի պաշարների
դեգրադացիա

Աղյուսակ 18.


	Տարածք (կմ ²)	Տոկոսը ընդհանուր տարածքի նկատմամբ (%)
Օրգանական ածխածնի պաշարներով բարելավված հողեր	3	0.0
Օրգանական ածխածնի պաշարներով կայուն հողեր	28 256	99.3
Օրգանական ածխածնի պաշարներով դեգրադացված հողեր	191	0.7
Տարածքներ որտեղ օրգանական ածխածնի պաշարների վերաբերյալ տվյալներ չկան	7	0.0

Ջրածածկ տարածքներն ընդգրկված չեն ընդհանուր տարածքի մեջ:

Ներկայացված աղյուսակներից երևում է, որ հաշվետու ժամանակաշրջանում օրգանական ածխածնի դեգրադացված պաշարով հողատարածքները նվազման միտում ունեն բազային ժամանակաշրջանի համեմատ, ինչը հիմնականում պայմանավորված է կոնվենցիայի ցամաքային տարածքի ծածկույթի դասերի վերափոխումներից օրգանական ածխածնի պաշարների կորստի նվազմամբ:

Բազային ժամանակաշրջանում հողում օրգանական ածխածնի պաշարների
դեգրադացիա


Նկար 5.



Source Data Credits: International Soil Reference and Information Centre (ISRIC) SoilGrids250m dataset. URL: <https://www.isric.org/explore/soilgrids>

Հաշվետու ժամանակաշրջանում հողում օրգանական ածխածնի պաշարների դեգրադացիա

Նկար 6.



5.1.4. SO 1-4 Ղեգրադացված հողերի մասնաբաժինն ընդհանուր տարածքի նկատմամբ (Կայուն զարգացման նպատակներ, ցուցանիշ 15.3.1)

Ամփոփելով վերը նշվածը ռազմավարական նպատակ SO1-ի առաջընթացի ցուցանիշները, կարելի է փաստել հետևյալը.

Ռազմավարական նպատակ SO1-ի առաջընթացի ցուցանիշները

Աղյուսակ 19

	Բազային ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
SO1-1 - ղեգրադացված ցամաքային տարածքի ծածկույթով հողեր	1.3% (1.3%)	0.1% (0.1%)
SO1-2 - ղեգրադացված արտադրողականությամբ հողեր	18.1% (0.3%)	18.1 % (4.2%)
SO1-3 - օրգանական ածխածնի պաշարներով ղեգրադացված հողեր	0.8% (0.8%)	0.7% (0.7%)

Փակագծերում PRAIS 4 Հայաստան-Խմբագրություն 1, 07/04/2022 05:54-SO1 աղբյուրի տվյալներն են:

PRAIS 4-ի հարթակի միջոցով ստացվել է ղեգրադացված հողերի մասնաբաժինը ընդհանուր հողատարածքի նկատմամբ (ենթադրյալ տվյալները):

Ղեգրադացված հողերի **մասնաբաժինն ընդհանուր հողատարածքի նկատմամբ** հաշվարկելու համար օգտագործվել են SO1-1, SO1-2 և SO1-3 (այսինքն՝ ցամաքային տարածքի ծածկույթի, հողերի արտադրողականության դինամիկայի և հողում օրգանական ածխածնի պաշարների) ցուցանիշները:

Ղեգրադացված հողերի ընդհանուր տարածքի (կմ²) և ղեգրադացված հողերի մասնաբաժինը ընդհանուր ցամաքային տարածքի նկատմամբ

Աղյուսակ 20.

	Ղեգրադացված հողերի ընդհանուր մակերեսը (կմ ²)	Ղեգրադացված հողերի մասնաբաժինն ընդհանուր հողատարածքի նկատմամբ (%)
Բազային ժամանակաշրջան	5 487	19.3% (1.8%)
Հաշվետու ժամանակաշրջան	5 532	19.4% (4.9%)
Ղեգրադացիայի մակարդակի փոփոխություն		45

Փակագծերում PRAIS 4 Հայաստան-Խմբագրություն 1, 07/04/2022 05:54-SO1 աղբյուրի տվյալներն են:


Ստացված տվյալները ղեգրադացված հողերի մասնաբաժինը գնահատելու հարցում ունեն սահմանափակ բնույթ: TREND ERTS գործիքով տարբեր աղբյուրներից ստացված ղեգրադացված հողերի մասնաբաժնի տվյալները բազային և հաշվետու ժամանակաշրջաններում բավականին տարբեր են (բազային ժամանակաշրջան 19.1%, 1.8%, և հաշվետու ժամանակաշրջան 19.4%, 4.9%): Նշված երկրորդ թվերի

արժեքները ներկայացված են PRAIS 4 Հայաստան-Խմբագրություն 1, 07/04/2022 05:54-SO1-4 աղբյուրից: Ենթադրյալ տվյալների համաձայն հաշվետու ժամանակաշրջանում բազային ժամանակաշրջանի համեմատ դեգրադացված հողերի մասնաբաժինն ընդհանուր տարածքի նկատմամբ ավելացման միտում ունի:

Հաշվի առնելով, որ մի կողմից հաշվետու ժամանակաշրջանում Կոնվենցիայի ցամաքային տարածքի ծածկույթի դեգրադացիայի տեմպերը բազային ժամանակաշրջանի համեմատ նվազել են ավելի քան 3 անգամ (SO1-1 ցուցանիշ) և հաշվետու ժամանակաշրջանում օրգանական ածխածնի դեգրադացված պաշարով հողատարածքները նվազման միտում ունեն բազային ժամանակաշրջանի համեմատ (SO1-3 ցուցանիշ), և մյուս կողմից հաշվետու ժամանակաշրջանում հողերի արտադրողականության դեգրադացիայի աճի միտում կա բազային ժամանակաշրջանում հողերի արտադրողականության համեմատ (SO 1-2 ցուցանիշ), կարելի է ենթադրել, որ հաշվետու ժամանակաշրջանում, բացի մարդածին գործոնների ազդեցության նվազումից, զուգահեռաբար ավելացել են բնական գործոնները (կլիմայի փոփոխություն, երաշտներ, հրդեհներ և այլն):

Բազային ժամանակաշրջանում դեգրադացված հողերի մասնաբաժինն ընդհանուր տարածքի նկատմամբ
(Կայուն զարգացման նպատակների ցուցանիշ 15.3.1)


Նկար 7




Հաշվետու ժամանակաշրջանում դեգրադացված հողերի մասնաբաժինն ընդհանուր տարածքի նկատմամբ

(Կայուն զարգացման նպատակների ցուցանիշ 15.3.1)


Նկար 8.



Source Data Credits: Derived based on the methodology in the Good Practice Guidance Version 2 for Sustainable Development Goal (SDG) indicator 15.3.1 - Proportion of land that is degraded over total land area. URL: <https://www.unccd.int/publications/good-practice-guidance-sdg-indicator-1531-proportion-land-degraded-over-total-land>



Source Data Credits: Derived based on the methodology in the Good Practice Guidance Version 2 for Sustainable Development Goal (SDG) indicator 15.3.1 - Proportion of land that is degraded over total land area. URL: <https://www.unccd.int/publications/good-practice-guidance-sdg-indicator-1531-proportion-land-degraded-over-total-land>



5.2. Ռազմավարական նպատակ 2

Բարելավել տուժած բնակչության կյանքի պայմանները: Այս նպատակի շրջանակներում պահանջվում է գնահատել.

- հարաբերական աղքատության գծից ցածր և/կամ տուժած տարածքներում եկամուտների անհավասարության պայմաններում ապրող բնակչության փոփոխության միտումները,
- տուժած տարածքներում անվտանգ խմելու ջրի հասանելիության միտումները,
- հողերի դեգրադացիայի արդյունքում տուժած բնակչության մասնաբաժնի փոփոխության միտումները՝ տարբերակված ըստ սեռի:

5.2.1. SO2-1 Հարաբերական աղքատության գծից ցածր և/կամ տուժած տարածքներում եկամուտների անհավասարության պայմաններում ապրող բնակչության փոփոխության միտումները

Բնակչության բարեկեցության, կենսամակարդակի գնահատման կարևոր քանակական ցուցանիշ է համարվում տվյալ երկրում աղքատության մակարդակը: Աղքատությունն արտահայտվում է տարբեր ձևերով և շոշափում կյանքի տարբեր կողմերը՝ սպառում, պարենային անվտանգություն, առողջություն, կրթություն, իրավունք, ներառյալ՝ ձայնի, անվտանգության, արժանապատվության և արժանապատիվ աշխատանքի իրավունքը:

Հայաստանում բնակչության կենսամակարդակի փոփոխության դինամիկան նկարագրվում է նյութական և ոչ նյութական աղքատության տեսանկյունից:

Ոչ նյութական աղքատության բնորոշիչներն են՝ վատ առողջությունը, կրթական ցածր մակարդակը կամ անգրագիտությունը, սոցիալական անտեսվածությունը կամ մերժվածությունը, անպաշտպանվածությունը, իրավունքների և խոսքի ազատության անկիրառելիությունը, այն է՝ գործնականում սեփական խնդիրների մասին հայտնելու անկարողությունը: Ոչ նյութական աղքատության հաղթահարման հիմնական ուղղությունը կրթական, առողջապահական և սոցիալական ծառայությունների մատչելիության բարելավումն է, այն է՝ անվճար ծառայությունների հասցեականության առավել հստակությունը և վճարովի ծառայություններից օգտվելու կարողությունների աճը:

Աղքատության չափման հիմնական (պաշտոնական) մոտեցումը Հայաստանում համարվում է 2019թ.-ի մեթոդաբանությունից բխող բացարձակ՝ ըստ սպառման, աղքատությունը: Նշված համատեքստում, համաձայն Համաշխարհային բանկի սահմանման, բացարձակ աղքատությունը՝ տնային տնտեսությունների որոշակի կենսամակարդակի ընդունելի նվազագույն ապահովման անկարողությունն է:

2015 թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի կողմից ընդունվեցին Կայուն զարգացման նպատակները (այսուհետ՝ ԿՁՆ), որոնք մինչև 2030 թ.-ը կայուն զարգացման օրակարգի իրականացման մոնիթորինգի մեխանիզմներն են, ինչպես նաև «մարդկանց, մոլորակի, խաղաղության, գործընկերության և բարգավաճման» շահերից ելնելով՝ գործողությունների պլան: Հայաստանում, բացի բացարձակ աղքատությունից, այս հետազոտության տվյալների հիման վրա չափվում է նաև


հարաբերական, սուբյեկտիվ և բազմաչափ աղքատությունը, սոցիալական բացառումները, նյութական գրկանքները և միջազգային աղքատության մակարդակը:

Ներկայումս գլոբալ մակարդակում ընդունված օրական 1.90 դոլար աղքատության շեմը շատ ցածր է Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տարածաշրջանի երկրների համար: Այս իրավիճակը շտկելու նպատակով Համաշխարհային բանկն առաջարկել է, որ միջին եկամուտ ունեցող երկրներում օգտագործվի երկու կամ ավելի շեմ:

Վերջերս Համաշխարհային բանկը թարմացրել է 2005 թ-ի միջազգային աղքատության գծի հաշվարկման մեթոդաբանությունը՝ փոխարինելով 2005 թ.-ի գնողունակության համարժեքության ցուցանիշները (այսուհետ՝ ԳՀՑ) 2011 թ.-ի ԳՀՑ-ով: Աղքատության միջազգային մակարդակների հաշվարկը նախատեսում է հետևյալ երկու քայլերը՝ թարմացնել աղքատության միջազգային գիծը և կառուցել միջազգային համադրելի բարեկեցության ագրեգատները: Այդ նպատակով թարմացման համար կիրառվում են միջազգային համադրումների ծրագրի (այսուհետ՝ ՄՀԾ) ամենավերջին արդյունքները, ինչը հեշտացնում է 2011 թ.-ի ԳՀՑ-ի հաշվարկը:

Հայաստանում աղքատության մակարդակի փոփոխության միտումներն ըստ աղքատության միջազգային գծի


Գծապատկեր 8.



Աղբյուր. SSԿԱՀ 2001-2020 և PovcalNet (տվյալներն արտաբեռնվել են 2021թ. հոկտեմբերին) Նշում. Աղքատության ցուցանիշները հաշվարկվել են ՀՄԾ-ի կողմից վերանայված ԳՀ2011-ի կիրառությամբ՝ 165.629-ին համարժեք գործակցով: Նախորդ տարիների ցուցանիշները ԳՀ2011-ի վերանայմանը համապատասխան վերահաշվարկվել են:

Հայաստանում աղքատության մակարդակի փոփոխության միտումներն ըստ միջինից ցածր և միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների դասում աղքատության միջազգային զծերի

Գծապատկեր 9.



Աղբյուր. SSYUՀ 2001-2020 և PovcalNet (տվյալներն արտաբեռնվել են 2021թ. հոկտեմբերին)


Նշում. Աղքատության ցուցանիշները հաշվարկվել են ՀՄԾ-ի կողմից վերանայված ԳՀ2011-ի կիրառությամբ՝ 165.629-ին համարժեք գործակցով: Նախորդ տարիների ցուցանիշները ԳՀ2011-ի վերանայմանը համապատասխան վերահաշվարկվել են:

Միջազգայնորեն համադրելի բարեկեցության ազրեգատներ կառուցելու համար Համաշխարհային բանկը ներդաշնակեցնում է տեղական տնային տնտեսությունների հետազոտությունների ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը՝ առավելագույնի հասցնելով երկրների համադրելիությունը ընդհանուր բարեկեցության ազրեգատը կառուցելու համար: Բարեկեցության ազրեգատները նույնպես ճշգրտվում են՝ կիրառելով յուրաքանչյուր երկրի համար ստացած գնողունակության նոր գործակիցը, որպեսզի դրանք արտահայտվեն նույն գնողունակության համարժեքության ցուցանիշով:

Աղքատության միջազգայնորեն համադրելի զծերը 2002-2020թթ.

ժամանակահատվածի կտրվածքով

Գծապատկեր 10.



Աղբյուր. PovalNet-ի և ECAPOV-ի հաշվարկներ: Նշում. Հասանելի վերջին տվյալները. Հայաստան (2020թ.), Վրաստան (2019թ.), Ղրղզստան (2019թ.), Ռուսիան (2018թ.), Ռուսաստան (2018թ.), Թուրքիա (2019թ.), Ուկրաինա (2019թ.) և միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներ (2019թ.):

Ըստ աղքատության միջազգային գծի (օրական մեկ շնչի հաշվով 1.90 ԱՄՆ դոլար) աղքատության մակարդակը 2001թ.-ից ի վեր կտրուկ անկում է ապրել և մնում է շատ ցածր մակարդակի վրա՝ 2020թ.-ին կազմելով 0.4 տոկոս: Ըստ միջինից ցածր եկամուտներ ունեցող երկրների դասում աղքատության գծի (օրական մեկ շնչի հաշվով 3.20 ԱՄՆ դոլար) աղքատության մակարդակը 2020թ.-ին կազմել է 6.9 տոկոս, ինչը 2019թ.-ի համապատասխան ցուցանիշի համեմատ շուրջ 3 տոկոսային կետով բարելավում է: Մյուս կողմից, ըստ միջինից բարձր եկամուտներ ունեցող երկրների դասում աղքատության գծի (օրական մեկ շնչի հաշվով 5.50 ԱՄՆ դոլար) աղքատության մակարդակը 2016թ.-ից տարեցտարի աճում է:

Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանում առկա է աղքատության նվազեցում, ինչին հիմնականում նպաստել է արձանագրված տնտեսական աճը: Համաձայն Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO) գնահատումների՝ աշխատող

աղքատների թիվը զգալիորեն նվազել է՝ 53,9%-ից (1991-2019թթ.) հասնելով 6,2%-ի 2008-2020թթ.: Որոշ չափով նվազել է նաև ծայրահեղ աղքատների թիվը:

5.2.2. SO2-2 Տուժած տարածքներում անվտանգ խմելու ջրի հասանելիության միտումները

Եթե որևէ հասարակությունում պատշաճ սննդի, որակյալ կրթության, մաքուր խմելու ջրի և ջրահեռացման ծառայությունների հասանելիությունը տարբերվում է՝ կախված անհատի սեռից, ծննդավայրից, էթնիկ կամ ռասայական պատկանելությունից կամ ծնողների սոցիալ-տնտեսական կարգավիճակից, սա նշանակում է, որ տվյալ հասարակությունում հնարավորություններն անհավասար են բաշխված:

Ջրի ազգային քաղաքականության հիմունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքն ուղղված է բնակչության հիմնական կարիքների բավարարմանը, վերականգնվող ջրային ռեսուրսների պահպանմանն ու օգտագործմանը և ջրի պակասի պատճառով հիվանդությունները նվազեցնելու և կանխարգելելու համար անհրաժեշտ քանակի ապահովմանը: Այդ համատեքստում, հիմնական թիրախը բնակչության ջրի առօրյա և կենցաղային պահանջների բավարարումն է:

ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից 6-րդ նպատակն այն է, որ մինչև 2030 թվականն ընկած ժամանակահատվածը պետք է «ապահովել ջրի և սանիտարական հասանելիությունը բոլորի համար»: ԿԶՆ 6-րդ նպատակի 6.1-ը թիրախն է մինչև 2030 թվականը հասնել անվտանգ և մատչելի խմելու ջրի համընդհանուր և արդարացի հասանելիության ապահովմանը բոլորի համար: Նմանապես, 6.4 թիրախը նպատակ ունի մինչև 2030թ. էականորեն մեծացնել ջրօգտագործման արդյունավետությունը բոլոր ոլորտներում և ապահովել քաղցրահամ ջրի կայուն ջրառը և ջրամատակարարումը՝ լուծելով սակավաջրության խնդիրը և էականորեն կրճատելով սակավաջրությունից տառապող մարդկանց թվաքանակը:

Խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները սահմանված են N 2-III-Ս 2-1 սանիտարական նորմերով և կանոններով (ՀՀ առողջապահության նախարարության 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N876 հրաման): Սանիտարական կանոնները կիրառվում են այն ջրի նկատմամբ, որը տրվում է ջրամատակարարման համակարգերի միջոցով և նախատեսված է բնակչության կողմից խմելու և կենցաղային նպատակներով սպառման, պարենային հումքի վերամշակման և սննդամթերքի արտադրության, պահպանման ու վաճառքի, ինչպես նաև որակյալ խմելու ջրի օգտագործում պահանջող արտադրանքի արտադրությունների համար:

Ջրամատակարարման ծառայություններից օգտվող քաղաքային բնակչության շեմը միշտ ավելի բարձր է, քան ջրամատակարարման ծառայություններից օգտվող գյուղական բնակչությանը: Ընդհանուր բնակչության համար այս ցուցանիշը 2016-2019 հաշվետու ժամանակաշրջանի համար ցույց է տալիս, որ «փոփոխություններ չկան» (որոշ շեղումներով)՝ նվազագույնը 96.1%, առավելագույնը՝ 97.9%, գյուղական բնակչության համար նվազագույնը կազմել է 90.6%, առավելագույնը՝ 94,4%:

Հարկ է նշել նաև, որ բարելավվել է մատուցվող ծառայությունների որակը: Դիտարկված բարելավումները հիմնականում կապված են ջրի կորուստների կրճատման և ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման քաղաքականության իրականացման, ինչպես նաև ջրային համակարգի կառավարման արդիականացման հետ:

Տարեցտարի բարձրանում է երկրի բնակչության ապահովվածությունը կենտրոնացված ջրամատակարարմամբ իսկ քաղաքային բնակավայրերի համար այն հասնում է գրեթե առավելագույնի:

Խմելու ջրի անվտանգ ծառայություններից օգտվող բնակչության գնահատականները
 Աղյուսակ 21.

Տարի	Քաղաքային (%)	Գյուղական (%)	Ընդհանուր (%)
2000	95.4	64.4	87.6
2005	97.9	72.8	89.4
2010	99.5	93.5	97.0
2015	99.9	92.5	97.3
2016	100	94.0	97.9
2017	99.9	93.3	97.3
2018	99.7	94.4	97.9
2019	99.5	90.6	96.1
2020	99.7	89.6	95.5

Հայաստանում կենտրոնական ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններից օգտվող բնակավայրերում միշտ չէ որ ծառայությունը հավասարաչափ է բաշխված: Կան բնակավայրեր (560), հիմնականում գյուղական, որոնք իրենք են ապահովում իրենց ջրամատակարարումը և ջրահեռացումը: Սակայն տեխնիկական, մարդկային և ֆինանսական ռեսուրսները բնակավայրերում անբավարար են: Սահմանափակ ուշադրություն է դարձվում այդ բնակավայրերի խնդիրներին և հաճախ այդ բնակավայրերը դուրս են մնում իրագործվող ծրագրերից:

Սահմանափակ տվյալներ կան այդ բնակավայրերի առկա իրավիճակի մասին: Կան բնակավայրեր, որոնք չունեն սեփական աղբյուրներ և հիմնական ջրատարներից գտնվում են մեծ հեռավորությունների վրա կամ ջուր են ստանում 2-3 օրը մեկ անգամ: Որոշ բնակավայրերում ջուրը նույնիսկ բերովի է:

Կենտրոնացված ջրամատակարարման համակարգի բարելավման համար անհրաժեշտ է բացել նոր ջրաղբյուրներ, իրականացնել համակարգի արդիականացում՝ նոր կամ վերանորոգված խողովակաշարերով: Անհրաժեշտ է կանխել ջրի կորուստը՝ միաժամանակ ապահովելով սպառողին անվտանգ ջրով:

5.2.3. SO2-3. Հողի դեգրադացիայի արդյունքում տուժած բնակչության մասնաբաժնի փոփոխության միտումները՝ տարբերակված ըստ սեռի

Ստորև ներկայացված աղյուսակը լրացված է ենթադրյալ գնահատականներով, որոնք ստացվել են SDG-ի 15.3.1 ցուցանիշի և WorldPop ծրագրի շրջանակներում ձեռք բերված բնակչության տվյալների տարածական համընկնումից:

Հողերի դեգրադացիայի ենթարկված բնակչության համամասնության ազգային գնահատականներն ըստ սեռի

Աղյուսակ 22.

Ժամանակահատված	Ազդեցության ենթակա բնակչության թվաքանակ	Ազդեցության ենթարկված ընդհանուր բնակչություն (%)	Ազդեցության ենթարկված իգական սեռը (թվաքանակ)	Ազդեցության ենթարկված ընդհանուր իգական սեռը (%)	Ազդեցության ենթարկված արական սեռ (թվաքանակ)	Ազդեցության ենթարկված ընդհանուր արական սեռ (%)
Բազային ժամանակաշրջան	828123	29.6	432145	29.6	395978	29.5
Հաշվետու ժամանակաշրջան	766713	27.8	400984	27.8	365729	27.7

Հաշվետու ժամանակահատվածում դեգրադացիայի ենթակա ընդհանուր բնակչության թվաքանակի նվազումը բազային ժամանակաշրջանում դեգրադացիայի ենթակա ընդհանուր բնակչության թվաքանակի համեմատությամբ կարելի է բացատրել ինչպես գյուղատնտեսական նշանակության հողերի վիճակի բարելավմամբ, (2006-ից մինչև 2019 թվականը միայն ոռոգելի հողատարածքները տարեցտարի ավելացել են 1600 հեկտարով) այնպես էլ՝ երկրի ընդհանուր բնակչության թվի նվազմամբ (2019 թվականին, 2000 թվականի համեմատ, երկրի ընդհանուր բնակչությունը նվազել է 8%-ով):

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղը» 2016-2021 թվականներին «Ռոռզման համակարգերի արդիականացման ծրագրի» շրջանակներում վերականգնել և կառուցել է ռոռզման համակարգեր շուրջ 2001 հա հողերում:

Բազային և հաշվետու ժամանակաշրջաններում ազդեցության ենթարկված կանանց բնակչության թվաքանակի հարաբերակցությունն ավելի փոքր է, քան նույն ցուցանիշը տղամարդկանց մոտ, ինչը բացատրվում է նաև տղամարդկանց թվաքանակի ավելի արագ նվազմամբ:

5.3. Ռազմավարական նպատակ 3

Ռազմավարական 3-րդ նպատակն է մեղմել երաշտի հետևանքները, հարմարվել և կառավարել դրանք՝ խոցելի խմբերի և էկոհամակարգերի կայունության բարձրացման նպատակով: Այս նպատակի շրջանակներում պահանջվում է գնահատել հետևյալը.

- Երաշտի ենթարկված հողերի մասնաբաժնի փոփոխության միտումները հողերի ընդհանուր ծածկույթի նկատմամբ:
- Երաշտի արդյունքում տուժած ամբողջ բնակչության մասնաբաժնի փոփոխության միտումները:
- Երաշտի խոցելիության աստիճանի միտումները:


5.3.1. SO3-1. Երաշտի ենթարկված հողերի մասնաբաժնի փոփոխության միտումները հողերի ընդհանուր ծածկույթի նկատմամբ

Կլիմայի փոփոխությունները հետզհետե ավելի մեծ մասշտաբային սպառնալիքների են վերածվում: Դրսևորվելով ոչ միայն միջին ջերմաստիճանի բարձրացմամբ ու տեղումների փոփոխությամբ, այլև եղանակային էքստրեմալ պայմանների հաճախությամբ ու էքստրեմումների արժեքների մեծացմամբ՝ տարածաշրջանային և տեղական մակարդակներում, որոնք ուղղակիորեն սպառնում են մարդկանց կենսապայմաններին, պատճառում հսկայական տնտեսական վնասներ:

Հիդրոմետ ծառայության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տասնամյակների ընթացքում Հայաստանում նկատվել է ջերմաստիճանի զգալի աճ, ընդ որում՝ 1929-1996 թթ. ընթացքում միջին տարեկան ջերմաստիճանն աճել է 0,4°C-ով, իսկ 1992-2016 թթ. այդ աճը կազմում է 1.23°C, ինչը վկայում է Հայաստանում ջերմաստիճանի բարձրացման էական տեմպերի մասին:

Սկսած 1994 թ. տարեկան միջին ջերմաստիճանի շեղումները նորմայից 1961-1990 թթ. միջինից (5.5°C) եղել են միայն դրական (բացառությամբ 2011 թ.), իսկ 2010 թ. Հայաստանում եղել է ամենատաքը, երբ շեղումը նորմայից կազմել է 2.7°C :

Օդի տարեկան միջին ջերմաստիճանի ($^{\circ}\text{C}$) 2017 թ. շեղումը 1961-1990 թթ. նորմայից
Գծապատկեր 11.



1935 թ. սկսած տարբեր ժամանակահատվածների համար գումարային տեղումների քանակի փոփոխության գնահատականների համեմատությունը ցույց է տալիս, որ տեղումների նվազման միտումը պահպանվում է:

Հայաստանի տարածքը խիստ զգայուն է կլիմայական փոփոխությունների նկատմամբ: Դիտված և սպասվելիք կլիմայական փոփոխություններն ու առաջին հերթին դրանց բացասական հետևանքները, ակնհայտ ազդեցություն են թողնում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, բնական էկոհամակարգերի և կենսազործունեության վրա:

Երկարատև օդերևութաբանական երաշտները հանգեցնում են ջրային ռեսուրսների 20-45% կրճատման: Երաշտի վերաբերյալ խորհրդատվությունները և նախազգուշացումները կարևոր նշանակություն ունեն ռիսկերի նվազեցման համար, սակայն երաշտի կանխատեսումը բավականին բարդ է:

Երաշտները զգալիորեն նպաստում են մեծամասշտաբ հրդեհների առաջացմանը: Ինչպես աշխարհի շատ այլ երկրներում, Հայաստանում նույնպես անտառային և

խոտաճածկ տարածքների հրդեհները՝ պայմանավորված երաշտային պայմաններով և երկարատև բարձր ջերմաստիճաններով, հաճախակի են դարձել՝ մեծ վնասներ հասցնելով տնտեսությանը:

Ստորև ներկայացված Աղյուսակ 23-ում նշված են այն տարածքները, որոնք ըստ տարիների ենթակա են օդերևութաբանական երաշտի վտանգի՝ օգտագործելով տեղումների ստանդարտացված ինդեքսը (SPI) և երաշտի խստության դասերը (սահմանված են Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության 2012թ. հրապարակման մեջ): SO3-1-ի տարածական չափման միավորն է կմ², կամ մասնաբաժինը՝ արտահայտված երկրի ընդհանուր հողատարածքի համամասնությամբ:


Երաշտի ենթակա հողերի տարածքներն ըստ երաշտի խստության դասերի 2000-2019թթ.

Աղյուսակ 23.

Երաշտի ինտենսիվության դասակարգումը կմ ²					
Տարի	Մեղմ երաշտ	Չափավոր երաշտ	Սաստիկ երաշտ	Ծայրահեղ երաշտ	Առանց երաշտ
2000	1551	10366	13894	3968	0
2001	12592	5069	1657	5356	5104
2002	6156	1396	0	0	22227
2003	4596	1585	0	0	23597
2004	8855	0	37	14	20873
2005	2597	451	0	0	26731
2006	5403	0	0	0	24376
2007	3771	0	0	0	26008
2008	22015	4872	2856	0	36
2009	4613	2783	589	1177	20616
2010	298	0	0	0	29481
2011	8661	0	0	0	21118
2012	15103	3362	3960	589	6765
2013	9955	3205	2732	3414	10472
2014	6591	1609	1764	1177	18639
2015	5843	0	0	0	23936
2016	4794	1766	0	0	23219
2017	8602	7332	6155	6214	1476
2018	4723	0	0	0	25056
2019	9396	3577	5902	8667	2237


Երաշտի ենթակա հողերի տարածքներն ըստ երաշտի խստության դասերի 2000-2015թթ.

Գծապատկեր 12.



Երաշտի ենթակա հողերի տարածքներն ըստ երաշտի խստության դասերի 2016-2019թթ.

Գծապատկեր 13.




Երաշտի ենթակա հողեր՝ առանց դասերի բաժանման 2000-2019թթ.

Աղյուսակ 24.

Տարի	Երաշտի ենթակա հողերի ընդհանուր մակերեսը (կմ ²)	Երաշտի ենթակա հողերի մասնաբաժինը (%)
2000	28463	100.0
2001	24674	86.7
2002	7552	26.5
2003	6182	21.7
2004	8906	31.3
2005	3048	10.7
2006	5403	19.0
2007	3771	13.3
2008	28458	100.0
2009	9162	32.2
2010	298	1.0
2011	8661	30.4
2012	23014	80.9
2013	19306	67.8
2014	11140	39.1
2015	5843	20.5
2016	6560	23.1
2017	28303	99.5
2018	4723	16.6
2019	27542	96.8

Երաշտի ենթակա հողեր՝ առանց դասերի բաժանման 2000-2019թթ.

Գծապատկեր 14.



